ichnet worden sind.

Der Bdeschch von Aldznik‘ hatte den Titel „Großer Bdeschch“, während die anderen als „andere Bdeschchen“ bezeichnet worden sind. Obwohl nur zwei Bdeschchen von Movses Khorenazi erwähnt worden sind, hat es in Wirklichkeit vier Bdeschchen in Großarmenien gegeben. Zwei von ihnen d. h. die Bdeschchen von Aldznik‘ und Gugark‘ sind im Laufe der Zeit zu erbberechtigten Fürsten geworden. Nach einiger Zeit, besser gesagt nach Abschluß des Vertrages von Nisibin (Mtzbin) im Jahre 298 geschah das gleiche auch mit dem dritten Bdeschchen (von Nor Schirakan oder Nuschirakan), während der Vierte als Vertreter der Königsfamilie allem Anschein nach weiterhin auch im Dienste geblieben ist, wenn auch er sich lediglich als Militärdienstleistender betätigt hat.

Die Bdeschchentümer sind mit den Namen der benachbarten Länder und Distrikte gekennzeichnet worden, gegen die ihre Streitkräfte vorgesehen waren. Daher haben diese Anfang des vierten Jahrhunderts die folgenden Namen gehabt: „Der grenzwachende Fürst von seiten Nor-Schirakans“ (Im Original gibt es eine Unrichtigkeit. Es sollte „...von seiten Schirakans“ heißen), „... von seiten Assyriens“, „... von seiten Aruastans“ und „... von seiten der Maskuten oder der Masageten“. Es ist ganz logisch, dass das nördliche Bdeschchentum vor dem Einfall der Maskuten ins Transkaukasien als „das grenzwachende Bdeschchentum von seiten der Gargaren“ bezeichnet worden ist.

Den Mitteilungen von Movses Khorenazi nach sei einer der grenzwachenden Fürste in den Herrschaftsjahren des großarmenischen Königs Artasches I (189-160) als die zweite Person im Königreich angesehen worden. Diese Anstellung hat der Königssohn Artawasd in Besitz gehabt. Seit den Zeiten von Walharschak Arschakuni hat ein solcher Privileg aber nicht mehr bestanden. In den den Bdeschchen zu ihrem eigenen Gebrauch zugewiesenen Ländereien, die im Laufe der Zeit zu erbberechtigten Grundbesitzen geworden sind, haben sich die feudalistischen Verhältnisse vergleichsweise schnell etnwickelt, indem diese zur Entstehung neuer erbberechtigten Fürstentümer führten, die in der Tat nicht dem König, sondern den Bdeschchen als ihren Vasallen untergeben waren. Das Leitmotiv des Feudalismus „Der Vasall meines Vasallen ist nicht mein Vasall“ hat also in Armenien ebenfalls bestanden.

Der Feudalisierung des Landes und der Entstehung verschiedener Fürstenstreitkräfte zufolge ist neben den Bdeschchen auch die Institution der Heerführer (Sparapeten) gebildet worden. Während die ersteren die königlichen Streitkräfte kommandierten, haben die letzteren die Befehlsgewalt über die Fürstentruppen besessen. Nach der im Jahre 387 vollzogenen Teilung des Königreichs Großarmenien zwischen Rom und dem Sassanidischen Persien sind die auf dem östlichen Hoheitsgebiet Großarmeniens bestandenen Bdeschchentümer aus dem Königreich getrennt und unmittelbar dem persischen Königshof unterstellt worden, indem sie den benachbarten Verwaltungsgebieten angeschlossen wurden. Während der Teilung der Bdeschchentümer hat man aber aus uns unbekannten Gründen bestimmte Teile ihrer Gebiete weiterhin auch im Hoheitsgebiet des ostarmenischen Königreiches bleiben lassen. Aus dem Bdeschentum von Gugark‘ ist beispielsweise die Distrikt von Taschirk‘, aus dem Bdeschchentum von Aldznik‘ die Bergdistrikte -Ketik, Tatik, Asnwaz-Dsor, Erchetk‘, Gselch, Salnodsor und Sanasunk‘ und aus dem Bdeschchentum von Nor Schirakan die Distrikt Ajli bzw. Kuritjan dem ostarmenischen Königreich angeschlossen worden.

Die fremden Quellen beinhalten keine wesentlichen Neuigkeiten zu den erwähnten Fragen und haben bloß die Auskünfte der armenischen Quellen ergänzt.

ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Գրիգոր Բրուտեան*

Վերջին տարիներին շատ խօսուեց եւ գրուեց քրիստոնէութիւնը Հայաստանում[1] պետական կրօն հռչակելու մասին: Եւ դա բնական էլ էր, քանի որ նշուեց Հայոց պատմութեան այդ ամենաբախտորոշ հանգրուանի 1700-ամեակը: Այսօր պաշտօնապէս ընդունուած է Հայոց դարձի թուական համարել Փրկչական 301 թուականը: Այս թուականը ամրագրուած է տարբեր պաշտօնական հրատարակութիւնների էջերում (Հայկական Հանրագիտարանում, Հայ ժողովրդի պատմութեան ակադեմիական բազմահատորեակում, դպրոցական եւ բուհական դասագրքերում եւ այլն): Այդուհանդերձ, դա չի խանգարում, որ, ինչպէս անցեալում, այսօր եւս, գիտական տարբեր հրապարակումներում բաւական լուրջ հիմնաւորուած տեսակէտներ ներկայացուեն՝ Հայոց դարձը Փ. 301 թուից առաջ կամ յետոյ դնելու վերաբերեալ: Օրինակ, մանրամասն քննելով քաղաքական անցուդարձը Առաջաւոր Ասիայում եւ Հայոց դարձի միջազգային քաղաքական հենքը, Ռուբէն Մանասերեանը Հայոց դարձի յարմարագոյն ժամանակ է համարում Փ. 304-306 թուականները[2]: Իսկ Ստ. Մալխասեանն էլ Հայոց դարձի ժամանակ է համարում Փ. 279 թիւը (Տրդատ Մեծի թագաւորութեան սկիզբ ընդունելով Փ. 263 թ.)[3]: Կատարելով զանազան փաստերի մանրամասն քննութիւն, Ստ. Մալխասեանը գրում է. «ըստ Խորենացու, որ միակ աղբիւրն է այս շրջանի ժամանակագրութեան, Տրդատը թագաւորել է 263 թուին, իսկ Հայոց դարձը, Ս. Գրիգորի ձեռնադրութիւնը, Էջմիածնի տաճարի շինութիւնը տեղի են ունեցել 279 թուին, եւ ոչ 301-ին, ինչպէս առհասարակ ընդունուած էր: Այս է ամենակարեւոր եզրակացութիւնը մեր կազմած աղիւսակի»[4]:

Բնականաբար, կան Հայոց դարձը այլ ժամանակ դնող հեղինակներ եւս: Ընդ որում, այդ բոլոր թուականներն էլ այս կամ այն կերպ հիմնաւորուած են: Ակնյայտ է, որ դրանք բոլորը միաժամանակ ճիշդ լինել չեն կարող. ճիշդ կարող է լինել դրանցից առաւելագոյնը՝ մէկը: Սակայն, դրանց քննութիւնը դուրս է մեր նպատակներից, եւ այստեղ դրանց չենք անդրադառնայ:

Իսկ ո՞ր տեղից է գալիս Փ. 301 թուականը: Զանց առնելով մանրամասնները, նշենք, որ այս թուականի վերջնական հիմնաւորումը գալիս է Մաղ. արք. Օրմանեանից: Իր կոթողային «Ազգապատումի» առաջին հատորում, քննելով Հայոց դարձի հետ կապուած պատմական անցքերի ժամանակագրութիւնը, նա Հայոց դարձը դնում է Փ. 301 թուին[5]: Եւ սրա համար էլ հիմք է ընդունում Ասողիկի այն տեղեկութիւնը, թէ «Քրիստոսի 553 թուին, ի լուսաւորութենէ սրբոյն Գրիգորի, ամս 252 կը հաշուէ (Ասող. 84)»[6]: Ընդհանրապէս, Օրմանեանը տալիս է հետեւեալ ժամանակները. վիրապից Ս. Գրիգորի ելնելը՝ Սահմի 10-ին (ըստ Յայսմաւուրքի), որ լինում է Փ. 301 թ.[7]. Նոյեմբերի 20-ը (Ս. Գայիանէի նահատակութիւնից 13 օր անց): Ս. Գրիգորի արած բժշկութիւնները՝ Սահմի 16-ին (Նոյեմբերի 26-ին), իսկ երկամսեայ քարոզութեան լրումն էլ դնում է Քաղոց 16-ին, որ է Փ. 302 թ. Յունուարի 25-ը: Այս նոյն օրն էլ համարում է Գրիգոր Լուսաւորչի մեծ տեսիլ-

© National Library of Armenia

քի, կամ այլ բացատրութեամբ՝ Միածնի իջման, կամ Էջմիածնի օրը[8]:

Այլ առիթով ցոյց է տրուել, որ հայ միջնադարեան մատենագրական աւանդոյթում Քրիստոսի ծնունդը համարուել է ներկայումս ընդունուած Փրկչական թուականի սկզբից որոշակիօրէն առաջ[9]: Տարբեր հայ հեղինակներ Քրիստոսի ծնունդը դրել են Ն.Ք. 2, 3, 4, կամ 5 թուականներին[10]: Մասնաւորապէս, Ստեփանոս Ասողիկը Քրիստոսի ծնունդը դրել է Ն.Ք. 2 թուին[11]: Ըստ այդմ, կը ստացուի, որ Ասողիկից Օրմանեանի արած մէջբերման համաձայն, Հայոց դարձը պիտի եղած լինի ոչ թէ Փ. 301, այլ Փ. 299 թուին (Քրիստոսի ծնունդից՝ Ն.Ք. 2-ից հաշուած 553 թիւը (այսինքն, դրանից 552 տարի յետոյ) կը լինի Փ. 551 թիւը, դրանից էլ 252 տարի առաջ, կը լինի Փ. 299-ը): Այնպէս որ, Մ. Օրմանեանի կատարած վկայակոչումը Ասողիկի պատմութիւնից հակառակ է հէնց իր իսկ՝ Օրմանեանի կառուցած ժամանակագրութեանը:

Հարկաւ, Հայոց դարձի թուականը ճշգրտելու համար կան բազմաթիւ տեղեկութիւններ՝ զանազան սկզբնաղբիւրներում: Դրանց մի մասը քննութեան առնուած է այս հարցի կապակցութեամբ՝ տարբեր առիթներով: Դա վերաբերում է յատկապէս պատմագրական երկերում եղած տուեալներին, որոնք էլ, հիմնականում, ելակէտ են դարձել Հայոց դարձի՝ ներկայումս ընդունուած թուականը որոշելիս:

Կան ոչ պակաս կարեւոր սկզբնաղբիւրներ եւս, որոնց տուեալները յանիրաւի մնացել են, կարծես, անտեսուած, չեն արժանացել պատշաճ ուշադրութեան: Խօսքս վերաբերում է հայկական տոմարագիտական երկերին, որոնցում յաճախ հանդիպում են ուղղակի թուական տուեալներ Հայոց դարձի ժամանակի մասին: Այս տուեալները իրենց բնոյթով տարբերւում են պատմագրական տուեալներից:

Բանն այն է, որ պատմագրական տուեալների հիմքում, որպէս կանոն, ընկած են տարբեր երկրների տիրակալների (թագաւորների, իշխանների, հոգեւոր իշխանութեան պետերի) գահատարիների ցուցակները (կանոնները, գաւազանագիրները), եւ իրադարձութիւնների ժամանակները տրւում են մեծ մասամբ՝ ըստ տարբեր իշխանաւորների տարիների: Այս դէպքում ընդհանուր ժամանակագրական համակարգը ճշգրտւում է եղած բոլոր տարիների համադրմամբ, բաղդատմամբ, համաձայնեցմամբ:

Սրան ի տարբերութիւն, տոմարական աղբիւրները յաճախ տալիս են իրադարձութիւնների ժամանակը միասնական ժամանակագրական համակարգով: Ընդ որում, այդ միասնական համակարգերը, որպէս կանոն, ստուգուած, ճշգրտուած են լինում տոմարական հաշւումների միջոցով, որով եւ՝ ա՛յս տուեալների հաւաստիութիւնը աւելի յուսալի է. դրանք աւելի են ենթակայ ստուգման եւ պատահական վրիպակ-սխալներն այստեղ կը լինեն անհամեմատ աւելի սակաւ: Ըստ այսմ, կարծում եմ, կարեւոր է Հայոց դարձի ժամանակի վերաբերեալ տոմարագիտական սկզբնաղբիւրների տուեալների օգտագործումը:

Այստեղ իմ խնդիրը չէ մանրամասն քննութեամբ Հայոց դարձի թուականի եւս մի անգամ ճշգրտումը, այլ ուզում եմ միայն տեսնել, թէ այս կարեւոր իրադարձութեանը վերաբերող ինչ տուեալներ կան Հայ տոմարագիտական սկզբնաղբիւրներում, եւ ինչ են ասում Հայոց դարձի ժամանակի մասին ա՛յդ տուեալները:

Արդ նայենք, թէ յատկապէս որ տոմարագէտ-հեղինակների երկերում ունենք տոմարական տուեալներ Հայոց դարձի ժամանակի մասին: Այս կարգի հեղինակների ցուցակը այնքան էլ ընդարձակ չէ: Ահա այն տոմարագէտ-հեղինակները, որոնց երկերում մեզ են հասել Հայոց դարձի ժամանակին վերաբերող հիմնական տոմարական տեղեկութիւնները. Անանիա Շիրակունի[12] (Շիրակացի), Ստեփանոս Ասողիկ, Յովհաննէս Կոզեռն, Յովհաննէս Սարկաւագ, Սամուէլ Անեցի, Յակոբ Ղրիմեցի: Կան նաեւ աւելի ուշ շրջանի տոմարագէտ-հեղինակներ, որոնց երկերում կան տոմարական տուեալներ Հայոց դարձի ժամանակի մասին: Սրանցից յիշարժան է յատկապէս Առաքել Նախիջեւանցին, որից մեզ է հասել իր չափածոյ տոմարը (գրուած Փ. 1730 թուին): Սրան կ՚անդրադառնանք ըստ կարգի: Կան նաեւ զանազան ժողովածուներում սփռուած բազմաթիւ տուեալներ, որոնց հեղինակների մասին ստոյգ տեղեկութիւններ չկան: Այս կարգի տեղեկութիւնները, թէպէտ յաճախ շատ ուշագրաւ են, այդուհանդերձ դրանց մեծ կարեւորութիւն չենք տայ: Պատճառն այն է, որ բազմակի արտագրութիւնների եւ խմբագրութիւնների հետեւանքով դրանք, բնականաբար, ենթակայ են եղել լուրջ աղաւաղումների: Եւ հեղինակը չիմանալն էլ մեզ հնարաւորութիւն չի տալիս այդ աղաւաղումները միարժէքօրէն գտնել, շտկել եւ սխալներից խուսափել[13]: Բացառութիւն կ՚անենք Յովհաննէս Աւագերէցի անունով հրատարակուած ժամանակագրութեան համար միայն, որի մասին նորագոյն հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ դրա կազմողը Դաւիթ քահանան է, եւ դրա մէջ մի կարեւոր հատուած Աթանաս Տարօնացու ժամանակագրութիւնից է (այս մասին՝ յօդուածիս վերջնամասում): Արդ դանք մեր նշած հեղինակներին:

Առաջինը Անանիա Շիրակունին է: Ընդհանրապէս, նա ամենավաղ հայ տոմարագէտն է, որի երկերը հասել են մեզ հեղինակի անուամբ հանդերձ: Նրան նախորդած հայ տոմարագէտներից յանուանէ գիտենք Մշոյ Ս. Կարապետի վանահայր Աթանաս Տարօնացուն, որ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի օրօք կարգադրել է Հայոց օրացոյցը: Բացի այդ, Առաքել Նախիջեւանցին յիշատակում է այս գործին մասնակցած երեք եպիսկոպոսներ եւս.

«Ցորժամ տոմար շինեցին,

.....

Կաթողիկոսն էր տէր Մովսէս,

Եղիայ վարդապետ տիտան Հեփտեն,

Իշխան Հայոց մեծն Մժէժ,

Եպիսկոպոս երեք ազգէս:

Եւ տէր Պետրոս քերթող Սիւնեաց,

Տէր Ներշապուհ ի Տարունեաց,

Տէր Բարդեշու[14] Սասնոյ գահեաց,

Սոքա զուքող են տօմարաց»:[15]

Այս երեք եպիսկոպոսներից էլ տոմարական երկեր մեզ չեն հասել: Եւ, ընդհանրապէս, նրանց տոմարական գործունէութեան մասին մեզ ոչինչ յայտնի չէ, բացի Առաքել Նախիջեւանցու վերոնշեալ տեղեկութիւնը[16]: Բնականաբար, այստեղ զանց կ՚առնենք եւ նրանցից հասած տեղեկութիւնների որոնումն ու քննութիւնը:

Արդ դանք Անանիա Շիրակունուն:

Անանիա Շիրակունուց մեզ հասած երկերում Հայոց դարձի ստոյգ ժամանակը տրուած չէ: Այդ մասին միակ տուեալը Անանիայի անուամբ հրատարակուած Պատմութեան մէջ է[17]: Այստեղ պարզապէս տրուած է, որ Հայոց դարձը եղել է Դիոկղետիանոսի կայսրութեան օրօք. աւելի ստոյգ տեղեկութիւն այս պատմու-

© National Library of Armenia

թեան հեղինակը[18] չի տալիս: Պէտք է ենթադրել, որ Հայոց դարձի աւելի ճշգրիտ ժամանակը նրան յայտնի չի եղել: Այսինքն, նրա ունեցած եւ օգտագործած սկզբնաղբիւրներում Հայոց դարձի ճշգրիտ ժամանակը տրուած չի եղել: Սա աւելի քան հաւանական է: Իրօք, եթէ յիշեալ պատմութիւնը Անանիայի հեղինակածը չէ, այլ շարայարութիւն՝ արուած տարբեր ոչ հայ հեղինակների երկերից[19], ապա լիովին բնական է այստեղ Հայոց դարձի ժամանակը չլինելը, եւ նոյնիսկ զարմանալի է դրա յիշատակումը: Եթէ դա Անանիայի հեղինակածն է, ապա նկատի ունենալով, որ Անանիան կրթութիւն է ստացել յոյն ուսուցչի (Տիւքիկոսի) մօտ, օգտուել նրա գրադարանից եւ ապա Հայաստան վերադարձել ու գործել քաղաքական աննպաստ վայրուվերումների ժամանակ[20], ապա բնական է, որ նա հնարաւորութիւն ունեցած չլինի Հայոց դարձի ճշգրիտ ժամանակը պարզելու ոչ իր ուսուցչի մօտ, ոչ եւս Հայաստանում:

Անանիայի այս տեղեկութիւնը օգտագործելու համար հարկ է նախ իմանալ, թէ ըստ Անանիայի (ժամանակագրութեան հեղինակի) երբ է գահակալել Դիոկղետիանոսը: Յօդուածս չծանրաբեռնելու համար զանց առնելով քննութեան մանրամասները, այստեղ նշեմ միայն, որ այս ժամանակագրութեան մի բաւական ընդարձակ հատուածում Հռոմի կայսրերի հերթական կարգը եւ նրանց գահատարիները բաւական լաւ ներդաշնակում են արդի պատմագիտութեան մէջ ընդունուածին: Գոնէ Մարկիանոսից (217–218 թթ.) մինչ Յոբիանոս (363–364 թթ.) հատուածում տարբերութիւնները աննշան են: Այս ժամանակամիջոցում ճիշդ են տրուած նաեւ տարբեր կայսրերի օրօք տեղի ունեցած կարեւոր իրադարձութիւնները (Հռոմի հիմնադրման հազարամեակը, Նիկիոյ ժողովը, Անդրէասի տոմարի հիմնումը եւն): Այսինքն, կարող ենք համարել, որ այս ժամանակագրութեան հեղինակը պիտի Դիոկղետիանոսին դրած լինի հէնց այն ժամանակում, որ ընդունուած է ներկայումս:

Դիոկղետիանոսը գահակալել է Քրկէ. 284-ից մինչ 305 թ. Մայիսի 1-ը: Ուրեմն, ըստ Անանիայի այս տեղեկութեան, Հայոց դարձը պիտի եղած լինի Փ. 284–305 թթ. միջակայքում:

Ըստ ժամանակի յաջորդը Ստեփանոս Տարօնացի Ասողիկն է: Թէպէտ այս հեղինակից տոմարական երկեր մեզ չեն հասել, այդուհանդերձ յայտնի է, որ նա եղել է նաեւ տոմարական հարցերի հմուտ գիտակ, եւ, ըստ այդմ, նրա պատմութեան մէջ բերուած տուեալները կարող ենք դիտել իբր տոմարագէտի կողմից ճշգրտուած տուեալներ: Ասողիկի պատմութեան մէջ էլ Հայոց դարձի վերաբերեալ ունենք մի քանի տեղեկութիւններ: Ահա դրանք. «Արդ խնդրելով զառաջին ամն Տրդատայ գտաք թագաւորեալ յերրորդ[21] ամին Դիոկղետիանոսի եւ յերկրորդ ամին Շապհոյ պարսից արքայի: Որոյ հասեալ ի Կեսարիա՝ յոլովք ի նախարարացն Հայոց ընդ առաջ ելանէին: Եւ յառաջին ամի թագաւորութեանն Տրդատայ սուրբն Գրիգոր անտանելի չարչարանացն տարեալ վասն Քրիստոսի հաւատոցն՝ վիրապընկեց լինէր»[22]: Այսինքն, Այստեղ Ս. Գրիգորի չարչարանաց սկիզբը դրուած է Տրդատի թագաւորութեան առաջին տարում , որն էլ նոյնացուած է Դիոկղետիանոսի երրորդ[23] եւ Շապուհի երկրորդ տարիներին: Ակնյայտօրէն այստեղ կայ ժամանակագրական աղաւաղում, քանի որ Շապուհի եւ Դիոկղետիանոսի տարիները իրար չեն ներդաշնակում:

Յաջորդ տեեկութիւնը, որ կայ Ասողիկի պատմութեան մէջ, հետեւեալն է.

«Եւ ի հնգետասաներորդ ամին Տրդատայ սուրբ կուսանքն Հռիփսիմեանք եւ Գայիանեանք վասն աստուածպաշտութեան հալածեալք ի Դիոկղետիանոսէ, եկեալ ի Վաղարշապատ քաղաք՝ զմարտիրոսական չարչարանս ընկալան ի Տրդատայ արքայէ. յորում աստուածահրաշ յայտնութեամբ ելեալ ի վիրապէն սուրբն Գրիգոր՝ լուսաւոր վարդապետութեամբ սկիզբն առնէ բժշկութեան հարուածոցն...»[24]: Այստեղ էլ, ըստ Ասողիկի, Հռիփսիմեան կոյսերի Հայաստան գալը, նահատակուելը եւ Ս. Գրիգորի՝ վիրապից ելնելն ու քարոզութեան սկիզբը դրուած են Տրդատի 15-րդ տարում, որ վերի տուեալի հետ համադրուելով, կը լինի Դիոկղետիանոսի 17-րդ տարին:

Երկու էջ յետոյ էլ տրուած է. «Յեօթն եւ ի տասներորդ ամի արքայութեանն Տրդատայ եկաց յաթոռ հայրապետութեանն Հայոց Սուրբն Գրիգոր, եւ ի ԽԷ ամի տերութեանն Տրդատայ զՌստակէս կրտսեր որդին Գրիգորի հանդերձեալ կազմեաց եւ առաքեաց ի քաղաքն Կեսարացւոց, ի ձեռնադրութիւն հայրապետութեան Հայաստան աշխարհիս, որ պաշտեաց զաթոռ հայրապետութեան ամս Է»[25]: Այսինքն, Ս. Գրիգորի հայրապետութեան սկիզբը դրուած է Տրդատի 17-րդ տարում եւ Ս. Արիստակէսի հայրապետութեան սկիզբն էլ՝ Տրդատի 47-րդ տարում, որով Ս. Գրիգորի հայրապետութեան տեւողութիւնը լինում է 30 տարի:

Տրդատի մասին Ասողիկի մօտ կայ նաեւ. «Եւ զայս արարեալ շիջուցանեն յինքեանց զբազմափայլ ճառագայթն աստուածպաշտութեան. եւ զրկեցան ի լուսոյ շնորհաց ճառագայթից նորա, որ թագաւորեաց ամս ԾԶ»[26]: Այսինքն, Տրդատի թագաւորութեան տեւողութիւնը տրուած է 56 տարի:

Ասողիկի յաջորդ տեղեկութիւնը հետեւեալն է. «Ժողովի ամենայն ժամանակն ի ծննդենէ Փրկչին մինչեւ ցժողովն Դունայ եւ ցթուականն Հայոց ամք ՇԾԳ. եւ ի լուսաւորութենէն սրբոյն Գրիգորի, որ է սկիզբն աստուածածանութեան աշխարհիս Հայոց՝ ամք ՄԾԲ»[27]: Այսինքն, Քրկչի ծնունդից մինչ Հայոց թուականի դրուելը 553 տարի է, իսկ Ս. Գրիգորի գործունէութեան սկզբից մինչ Հայոց թուականը՝ 252 տարի:

Տրդատի թագաւորութեան սկզբի մասին տալիս է նաեւ. «Յերրորդ ամին Դիոկղետիանոսի թագաւորէ Տրդատ Հայոց. իսկ Դիոկղետիանոս ի վերայ երիցն այլ եւս ԺԷ ամ թագաւորեաց»[28]: Այսինքն, այստեղ եւս Տրդատի թագաւորութեան սկիզբը դրուած է Դիոկղետիանոսի 3-րդ տարում:

Արդ նայենք, թէ ինչ են տալիս Ասողիկի ժամանակագրական բոլոր տեղեկութիւնները միասին:

Ս. Գրիգորի տարիները տրուած են երկու կերպ. ըստ Տրդատի թագաւորութեան տարիների եւ ըստ Դուինի ժողովի, որն էլ իր հերթին տրուած է ըստ Քրիստոսի ծննդեան տարիների: Այսինքն, Ս. Գրիգորի տարիները տրուած են ըստ Տրդատի թագաւորութեան եւ ըստ Քրիստոսի ծննդեան տարիների: Տրդատի տարիներն իրենք տրուած են ե՛ւ ըստ Դիոկղետիանոսի, ե՛ւ էլ ըստ Շապուհի տարիների: Ընդ որում, Դիոկղետիանոսի եւ Շապուհի տարիները իրար չեն ներդաշնակում:

Արդ աղիւսակի տեսքով տանք Ասողիկի ժամանակային տուեալները, որ այս կամ այն կերպ վերաբերում են Ս. Գրիգորին եւ նրա գործունէութեանը:

© National Library of Armenia

Աղիւսակ 1ա

*	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ
Ա	*									553
Բ		*		2	2					
Գ			*	1	1					
Դ		2	1	*	0	14	16	46	56	
Ե		2	1	0	*					
Զ				14		*				252
Է				16			*	30		
Ը				46			30	*		
Թ				56					*	
Ժ	553					252				*

Այստեղ հայերէն տառերով նշանակուած են հետեւեալ իրադարձութիւնները.

Աղիւսակ 1բ

Ա	Քրիստոսի ծնունդը,
Բ	Դիոկղետիանոսի թագաւորութեան սկիզբը,
Գ	Շապուհի թագաւորութեան սկիզբը,
Դ	Տրդատի թագաւորութեան սկիզբը,
Ե	Ս. Գրիգորի չարչարանաց սկիզբը,
Զ	Հռիփսիմեանց նահատակութիւնը, Ս. Գրիգորի ելն ի վիրապէն եւ քարոզութեան սկիզբը,
Է	Ս. Գրիգորի հայրապետական ձեռնադրութիւնը,
Ը	Ս. Գրիգորի վախճանը եւ Ս. Արիստակէսի ձեռնադրութիւնը,
Թ	Տրդատի մահը,
Ժ	Դուինի ժողովը, Հայոց թուականի սկիզբը:

Նշուած իրադարձութիւնների միջեւ եղած ժամանակամիջոցները (ըստ Ասողիկի) գրուած են համապատասխան տողերի եւ սիւների հատման վանդակներում:

Այս աղիւսակների յարաբերական թուերից բացարձակ տարեթուերի անցնելու համար հարկ է ոեւէ կերպ սրանք կապակցել ներկայումս կիրառուող Փրկչական տարեհաշուի համակարգին: Դա կարող ենք անել կամ Շապուհի տարիների միջոցով, կամ Դիոկղետիանոսի տարիների միջոցով, եւ կամ էլ Քրիստոսի ծննդեան տարիների միջոցով:

Շապուհի տարիները, ինչպէս ժամանակին նկատել է Ստ. Մալխասեանցը, բնաւ չեն ներդաշնակում ո՛չ Դիոկղետիանոսի տարիներին, եւ ո՛չ էլ Քրիստոսի ծննդեան տարիներին: Ըստ այսմ, Շապուհի տարիները այստեղ հաշուի չենք առնի[29]: Մնում են Քրիստոսի ծննդեան եւ Դիոկղետիանոսի տարիները: Սրանցից վերջինը բաւական յստակ որոշուած է.

յայտնի է, որ Դիոկղետիանոսը գահ է բարձրացել փ. 284 թ.[30]: Եւ սա էլ կը տայ, որ Ս. Գրիգորի ելն ի վիրապէն եւ Հայոց աշխարհի լուսաւորութեան սկիզբը պիտի լինի Դիկղետիանոսի թագաւորութեան սկզբից 16 տարի յետոյ՝ նրա 17-րդ տարում, որ կը լինի փ. 284+16 = փ. 300 թուականը[31]: Նոյնն է տալիս եւ Հայոց թուականի սկզբից 252 տարի առաջ եղած լինելը: Հայոց 1 թ. Նաւասարդի 1 = փ. 552 թ. Յուլիսի 11 (ըստ Աթանաս Տարօնացու սահմանածի), որով եւ Հայոց դարձը կը լինի փ. 552 թ.–252 տարի = փ. 300 թ.[32]:

Միւս կողմից էլ, ինչպէս ժամանակին ցոյց է տրուել, Ասողիկը Քրիստոսի ծնունդը դրել է ն.Քրիստոս. 2 թուին[33], որով Հայոց լուսաւորութիւնը կը լինի փ. 299 թուին. այս մասին տե՛ս յօդուածիս սկզբում: Ստացւում է, որ Ասողիկի տուեալների երկու խումբը տալիս են Հայոց դարձի համար երկու թուականներ՝ իրարից մէկ տարով տարբեր[34] (Փրկչ. 299 թ. եւ Փրկչ. 300 թ.):

Փաստօրէն, Ասողիկի տուեալները ինքնահամաձայնեցուած չեն: Դժուար է միանշանակ ասել, թէ որն է դրա պատճառը: Պարզ է մի բան. քանի դեռ ամբողջովին քննուած-վերականգնուած չէ Ասողիկի կիրառած բուն ժամանակագրական համակարգը, չենք կարող հաստատ իմանալ, թէ Ասողիկն իրօք ո՞ր տարում է դրել Հայոց դարձը:

Կարելի է, թերեւս, միայն սխալ համարել ըստ Շապուհի տրուած տարիների ստացուող 256 թուականը, եւ ըստ այդմ կ'ունենանք, որ ըստ Ասողիկի Հայոց դարձը դրուած է Փ. 299, կամ Փ. 300 թուականներին:

Արդ գանք Յովհաննէս Կոզեռն վարդապետի տուեալներին: Միջնադարի այս ականաւոր մշակութային գործիչը իր ժամանակ յորջորջուել է «վարդապետ Հայոց»: Սակայն, դրան հակառակ, Յովհաննէս Տարօնացի (Կոզեռն) վարդապետի տոմարագիտական ժառանգութիւնից ցաւալիօրէն շատ քիչ բան է մեզ հասել:

Նրա անունով մեզ հասած եւ հրատարակուած տոմարական կարճառօտ մեկնութեան մէջ ունենք. «... եւ վասն զի ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի սրբոյն Գրիգորի ելն ի վիրապէն, են ամք .ՄՀԶ. եւ անտի մինչեւ ի դնել թուականին Հայոց ամք .ՄՀԶ. Արդ եթէ կամիցիս գիտել...»[35]: Այսինքն, Յովհաննէս վարդապետը Հայոց դարձը (Ս. Գրիգորի ելն ի վիրապէն) դրել է Հայոց թուականի դրուելուց 276 տարի առաջ ու նաեւ Քրիստոսի ծնունդից 276 տարի յետոյ:

Յովհաննէս Կոզեռնի կիրառած բուն ժամանակագրական համակարգը մեզ յայտնի չէ (այն չի քննուած եւ վերականգնուած), ուստի եւ չենք կարող իմանալ, թէ երբ է Յովհաննէս վարդապետը դրել Քրիստոսի ծնունդը: Ըստ այդմ, չենք կարող նաեւ վստահ իմանալ, թէ ըստ Կոզեռնի՝ Փրկչական ո՞ր տարին է լինում Քրիստոսի ծնունդից 276 տարի յետոյ դրուած Հայոց դարձը: Մնում է՝ Կոզեռնի տուած՝ Հայոց դարձի ժամանակը որոշել ըստ Հայոց թուականի: Այստեղ կարող է հարց առաջանալ, թէ ի՞նչ ի նկատի ունի Կոզեռնը, երբ գրում է. «մինչեւ ի դնել թուականին Հայոց»: Սա կարող է նշանակել ե՛ւ Հայոց թուականի սկիզբը (դրա առաջին տարին), ե՛ւ էլ Հայոց թուականի հիմնադրմանը նուիրուած ժողովը: Բարեբախտաբար, իր տոմարական մեկնութեան մէջ Կոզեռնը տալիս է եւ սրա՛ պատասխանը: Այսպէս. այս երկում կայ. «Արդ, վասն զի յարաց ամսոյ .Լ. հանդիպեցաւ դնել զգիր թվականութեան ազգիս Հայոց...»[36]: Այս հատուածում խօսքը վերաբերում է Յայտնութեան տօնի հայկական ամիս-ամսաթուին: Եւ, յայտնի է, որ Հայոց թուականի առաջին տարում

© National Library of Armenia

Յայտնութեան տօնին՝ Յունուարի 6-ին համապատասխանել է հայկական Արաց ամսի 30(Լ)-ը[37]: Այսինքն, Յովհաննէս Կոզեռնը Հայոց թուականի դրուել ասելով ի նկատի է ունեցել հէնց Հայոց թուականի առաջին տարին, երբ Յունուարի 6-ը զուգադրուած է եղել Արաց 30-ին: Ուրեմն, Ս. Գրիգորի՝ վիրապից ելնելն էլ պիտի եղած լինի Հայոց թուականի սկզբից 276 տարի առաջ: Քանի որ, ըստ վերոնշեալ համապատասխանութեան, Հայոց առաջին թուականը պիտի սկսուած լինի Փրկչ. 552 թ. Յուլիսի 11-ով, ապա դրանից 276 տարի ետ գնալով, կը ստանանք 552–276=276: Այսինքն, Յ. Կոզեռնը Հայոց դարձը դրել է Փրկչ. 276 թուին: Ըստ այսմ, Քրիստոսի ծնունդն էլ կը լինի ըստ Կոզեռնի Ն.Ք. 1 թուին (Ն.Ք. 1 թ.+276 տարի+276 տարի–1 տարի[38]=Փրկչ. 552 թ.):

Յաջորդ տոմարագէտ-հեղինակը Յովհաննէս Սարկաւագ վարդապետն է: Սարկաւագ վարդապետի ժամանակագրական համակարգը սրանից առաջ առանձին քննութեան առարկայ է եղել, եւ ընդհանուր համակարգի քննութեամբ պարզուած է, որ Հայոց դարձը նա դրել է Փրկչ. 298 թուին[39]: Թէպէտ Սարկաւագի ժամանակագրական համակարգը առանձին քննուած է, այդուհանդերձ, յօդուածիս ամբողջականութիւնը պահպանած լինելու համար այստեղ կարճառօտ կը ներկայացնեմ Հայոց դարձին վերաբերող սարկաւագեան տուեալների քննութիւնը:

Յովհաննէս Սարկաւագի «Ժամանակագրութեան» մէջ ունենք.

«Ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ցսուրբ Գրիգոր՝ ամք ՅԴ (304): ...

...Ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ի հայ թուականն ամք ՄԾԲ (252) »:[40]

Նոյն ժամանակագրութեան մէջ քիչ վարը կարդում ենք.

«Անտի (ի ժողովէն Դվնայ - Գ.Բ.) ի քաղաքի ժողովն՝ ի սուրբ Կաթողիկէ՝ ամք Ղ (90), յորում որոշեցին Յոհան Տիկորեցի: Եւ էր թուականն հայոց ՃՀԳ (173):

Եւ յելիցն ի վիրապէն սրբոյն Գրիգորի՝ ամք ՇԼԳ (533)».[41]

Ունենք նաեւ. «Յառաքելոյն Թադէոսէ ի սուրբ Գրիգոր՝ ՄԿԶ(266)».[42]

Իր հեղինակած մի այլ՝ «Մեկնութիւն Տումարիս Հայկազնեայ» աշխատութեան մէջ Սարկաւագ վարդապետը տալիս է այլ տուեալներ. «Ի ՄԿԹ (269) [ղիմպիադին] սուրբ Հռիփսիմեանքն եկին ի Հայք: Ի ՄՀ (270) ղիմպիադին սուրբն Գրիգոր ձեռնադրի հայրապետ Հայոց: Ի ՄՀԷ (277) ղիմպիադին սուրբ ժողովն Նիկիայ եղեւ»[43]: Օլիմպիադի համակարգով ժամանակը թերի է տրուած. տրուած են միայն քառամեակների թուերը, իսկ քառամեակի մէջ տարիների հերթական համարները տրուած չեն, որով եւ առաջանում է քառամեայ, կամ հնգամեայ անորոշութիւն:

Արդ, ունենք երեք տարբեր թուեր, որոնց միջոցով կարելի է որոշել Ս. Գրիգորի ժամանակը եւ ունենք քառամեայ (կամ հնգամեայ) մի միջանցք, որից դուրս այդ ժամանակը չպէտք է լինի: Այդ միջանցքը Օլիմպիադի համակարգով տրուած տարիներն են, իսկ երեք թուերը հետեւեալն են.

Քրիստոսի ծննդից մինչեւ Ս. Գրիգոր՝ 304 տարի, Ս. Գրիգորից Հայոց թուական՝ 252 տարի, Թադէոսից Ս. Գրիգոր՝ 266 տարի:

Նախ սկսենք նրանից, որ այս երեք թուերը տրուած են ժամանակագրութեան տարբեր համակարգերով: Այդ է պատճառը, որ դրանցից առաջին երկուսը տալիս են մի բան, իսկ երրորդը՝ այլ բան: Այսպէս. Քրիստոսից Ս. Գրիգոր տրուած 304-

ին եթէ գումարենք Ս. Գրիգորից Հայոց թուական 252-ը, պիտի ստանանք Քրիստոսից Հայոց թուական տարիները, որ կը տայ՝ 304+252=556: Սա, ինչպէս այլ տեղ ցոյց է տրուել, այդ միջակայքի համար ըստ հինգհարիւրեակի համակարգի[44] որոշուած ճշգրիտ ժամանակն է:[45] Կը նշանակի, 304-ն ու 252-ը ըստ Շ.եակի համակարգի տրուած թուեր են եւ, որպէս այդպիսիք՝ ճիշդ են:

Գալով ըստ Թադէոս առաքեալի տրուած տարիներին, այս տուեալը կիրառելի չէ, առանց Թադէոսի ժամանակը ճշգրտելու:[1] Իսկ Թադէոսի ժամանակն ինքը յուսալիօրէն որոշուած չէ[46], եւ ըստ դրա մի այլ թիւ որոշելը կարող է սխալի հանգեցնել: Քննելով Թադէոս առաքեալի ժամանակի հարցը Սարկաւագի ժամանակագրական համակարգում, գտնում ենք, որ Թադէոսի ժամանակն էլ, ամենայն հաւանականութեամբ, պիտի լինի Քրիստոսից 36 տարի յետոյ, որով եւ Հայոց դարձը լինում է Քրիստոսից 36+266=302 տարի յետոյ: Սա էլ Հայոց դարձի ժամանակն է՝ տրուած ըստ եօթնասնից ժամանակագրական համակարգի:[47]

Այսպիսով, Սարկաւագի կիրառած ժամանակագրական երկու տարբեր համակարգերով Քրիստոսի ծնունդից մինչեւ Հայոց դարձը (Ս. Գրիգորի ելն ի վիրապէն) 302 տարի է (ըստ եօթնասնից), եւ 304 տարի (ըստ հինգհարիւրեակի): Ներկայումս կիրառուող Փրկչական տարիներին անցնելու պարագայում այս երկուսն էլ տալիս են Փրկչ. 298 թիւը[48]: Այսինքն, Սարկաւագ վարդապետը Հայոց դարձը դրել է Փ. 298 թուին:

Յովհաննէս Սարկաւագի աշակերտ տոմարագէտ-պատմագիր Սամուէլ Անեցին Հայոց դարձի ժամանակի մասին տեղեկութիւններ է տալիս իր երկու տարբեր երկերում: Իր հեղինակած «Մեկնութիւն Տումարի» երկում գրում է. «Արդ՝ յայնմ ամի յորում զթուականն եդին, հինգ հազար ինն հարիւր եօթանասուն եւ վեց (5976) ամ էր յԱդամայ մինչեւ ի հայ թուականն, եւ ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի սրբոյն Գրիգորի ելն ի վիրապէն ամք երկու հարիւր եօթանասուն եւ վեց (276) եւ անտի մինչեւ ցհայ թուականն ամք երկու հարիւր եօթանասուն եւ վեց (276), որ լինի ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ցհայ թուականն ամք հինգ հարիւր յիսուն եւ երկու (552), եւ ըստ ոմանց՝ հինգ հարիւր յիսուն եւ մի (551)».[49] Այստեղ Հայոց դարձի ժամանակը տրուած է երկու կերպ. Քրիստոսի ծնունդից հաշուած տարիներով եւ մինչեւ Հայոց Մեծ թուականի սկիզբը եղած տարիներով[50]:

Սամուէլ Անեցու այս տեղեկութեան հիման վրայ կարելի է Հայոց դարձի ժամանակը որոշել ե՛ւ ըստ Քրիստոսի ծննդեան, ե՛ւ էլ ըստ Հայոց թուականի: Այլուստ յայտնի է, որ Սամուէլ քահանան Քրիստոսի ծնունդը դրել է Ն.Ք. 2 կամ 4 թուականին: Այսինքն, կարող ենք հիմք ընդունել Քրիստոսի ծննդեան այս տարիներից մէկնումէկը եւ ըստ այդմ գտնել Հայոց դարձի ժամանակը: Միւս կողմից, սակայն, Քրիստոսի ծննդեան թուականը ըստ Սամուէլ քահանայի որոշուած է միայն նրա Պատմութեան հիման վրայ, իսկ տոմարական մեկնութեան մէջ չկան տուեալներ, որոնցով կարելի լինէր պարզել Քրիստոսի ծննդեան ժամանակը: Այսինքն, թէպէտ «Մեկնութիւն տոմարի» երկում Սամուէլ քահանան տուել է Հայոց դարձի ժամանակն ըստ Քրիստոսի ծննդեան, միեւնոյնն է, մենք չենք կարող դարձի ժամանակը որոշել ըստ այդ տուեալի:

Տոմարական մեկնութեան մէջ ժամանակագրական հաշուարկի միակ լուրջ մեկնակէտը Հայոց թուականի սկիզբն է,

© National Library of Armenia

որի համար տրուած են ե՛ւ տոմարական տուեալներ, ե՛ւ էլ Աշխարհի արարչութեան թուականը հինգհարիւրեակի համակարգով (5976թ.): Ըստ Սամուէլի տուած տոմարական մակաչափերի Հայոց թուականի սկիզբը Փ. 552-ին է: Հինգհարիւրեակի համակարգով Արարչութեան 5976-ը եւս համապատասխանում է Փ. 552-ին: Ուրեմն, եթէ հաշուարկի ելակէտ ընդունենք Հայոց թուականի սկիզբը, որ ըստ Սամուէլ քահանայի տուեալների Փ. 552-ին է, ապա կը ստացուի Հայոց դարձը Փ. 276-ին (Փ. 552թ.–276 տարի=Փ. 276 թ.):

Ըստ առաջին վկայութեան (Քրիստոսի ծնունդից անցած տարիների) ստացւում է, որ Սամուէլ քահանան Հայոց դարձը դրել է Փ. 275 թուին (276 տարի–Ն.Ք. 2 թ.+1տարի=Փ. 275 թ.):[51] Ըստ Հայոց Մեծ թուականի հաշուելու համար էլ հարկ է նկատի առնել, որ նոյն հատուածում Սամուէլ քահանան տալիս է Քրիստոսի ծնունդից Հայոց թուական 552 տարի, որով ըստ այդմ Հայոց թուականի սկիզբը կը լինի Փրկչ. 551 թ. (552 տարի–Ն.Ք. 2 թ.+1 տարի=Փրկչ. 551 թ.: Այսինքն, ըստ Հայոց թուականի էլ ստացւում է Փրկչ. 275 թ.: Այս երկու դէպքերում էլ հաշուարկի ելակէտ ընդունուեց Քրիստոսի ծնունդը, որ Սամուէլ Անեցին դրել է Ն.Ք. 2 թուին: Եթէ հաշուարկի ելակէտ ընդունենք Հայոց թուականի սկիզբը, որ պիտի լինի Փ. 552-ին, ապա կը ստացուի Քրիստոսի ծնունդը Ն.Ք. 1 թուին եւ Հայոց դարձն էլ Փ. 276-ին: Այսպիսով, ըստ Սամուէլ Անեցու տոմարական մեկնութեան Հայոց դարձը դրուած է Փրկչ. 275, կամ 276 թուին (կախուած հաշուարկի մեկնակէտից):

Այս թուերից աւելի ճիշդ է ընդունել 276-ը: Բանն այն է, որ Սամուէլ քահանայի կողմից Քրիստոսի ծնունդը Ն.Ք. 2 թուին դրուած լինելը գտնուած է նրա Պատմութեան տուեալների քննութեամբ: Իսկ «Մեկնութիւն տոմարի» երկում եղած տուեալները Քրիստոսի ծննդեան այդպիսի թուականի համար հիմք չեն տալիս: Տոմարական մեկնութեան մէջ ժամանակագրական հաշուարկի միակ լուրջ մեկնակէտը Հայոց թուականի սկիզբն է, որի համար տրուած են ե՛ւ տոմարական տուեալներ, ե՛ւ էլ Աշխարհի արարչութեան թուականը հինգհարիւրեակի համակարգով (5976թ.): Ըստ այսմ, հիմք ընդունելով Հայոց թուականի սկիզբը, կը՝ ստանանք, որ իր տոմարական մեկնութեան մէջ Սամուէլ Անեցին Հայոց դարձը դրել է Փ. 276-ին:

Ի տարբերութիւն սրան, Սամուէլ Անեցու Պատմութեան մէջ Հայոց դարձի ժամանակը տրուած է բոլորովին այլ կերպ: Այսպէս՝ Պատմութեան սկզբնամասում ունենք. «Ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ցսուրբն Գրիգոր ամք ՅԺԸ (318). եւ անտի ի Հայ թուականն ամք ՄԽԲ (242)»[52]: Այս տուեալները որոշակիօրէն աղաւաղուած են: Այսպէս, ըստ սրանց, կը լինի՝ Քրիստոսի ծնունդից մինչեւ Հայոց թուականի սկիզբը 318+242=560 տարի: Միեւնոյն ժամանակ, Սամուէլ քահանան իր նոյն Պատմութեան մէջ Հայոց թուականի հիմնումը՝ դրա սկիզբը դնում է Քրիստոսի ծննդեան 554 թուին[53], եւ, ըստ ա՛յսմ, պիտի Քրիստոսի ծնունդից մինչեւ Հայոց թուական լինի 553 տարի (554–1=553)[54]: Այս 553 տարին (եւ համապատասխան 554 թիւը) վերի երկու թուերի հետ կը ներդաշնակի մի՛միայն, եթէ վերի թուերը վերցուեն ըստ հրատարակչի ծանօթագրութեան մէջ նշուած տարբերակների: Ինչպէս նշել է Անեցու Պատմութեան հրատարակիչը, բացի հիմնական ձեռագրից միւս ձեռագրերը 318-ի փոխարէն ունեն 312 (ՅԺԲ)[55] եւ 242-ի փոխարէն էլ՝ 241(ՄԽԱ)[56]: Արդ, եթէ այս թուերը վերցնենք ըստ տողատակի տարբերակների, ապա կը լինի Քրիստոսի ծնունդից մինչեւ Հայոց թուականը 312+241=553 տարի[57]: Ըստ այսմ, պիտի համարենք, որ Սամուէլ Անեցու Պատմութեան մէջ սոյն տեղում նախապէս եղել է.՝ «Ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ցսուրբն Գրիգոր ամք ՅԺԲ (312). եւ անտի ի Հայ թուականն ամք ՄԽԱ (241)»: Ըստ այս տուեալի էլ կը լինի Հայոց դարձի ժամանակը Փրկչ. 311 թուին (312 տարի–Ն.Ք. 2 թ.+1 տարի=Փ. 311 թ., կամ էլ՝ Փ. 552 թ.–241 տարի=Փ. 311 թ.)[58]:

Սրանից մի քանի էջ յետոյ էլ Պատմութեան բուն շարադրանքում Հայոց դարձը դրուած է Քրիստոսի ծննդեան 305 թուին, որ նշանակում է թէ, պիտի լինի Քրիստոսի ծնունդից 304 տարի անց[59]:

«ՅԵ: Առաջին աստուածածանօթութիւն Հայոց:

Ի ԵԺ.ան ամին Տրդատայ՝ յորումն ճգնազգեաց սուրբ կուսանքն Հռիփսիմեանք՝ քաջութեամբ նահատակեցան ի Վաղարշապատ քաղաքի, եւ աստուածային զանազան նշանք եղեն առ Տրդատ՝ եւ առ աշխարհն Հայոց, սուրբն Գրիգոր ելեալ ի բանդէ վիրապին՝ աստուածային այցելութեամբ, լուսաւոր վարդապետութեան սկիզբն առնէ՝ եւ հարուածոցն բժշկութիւն՝ եւ ցուցումն յԱստուծոյ սուրբ կաթուղիկէին՝ եւ այլոց վկայարանացն վկայութիւն»:[60] Դրանից երկու տարի անց էլ դնում է Ս. Գրիգորի հայրապետ ձեռնադրուելը. «Ի ԺԷ. ամին Տրդատայ նստի յաթոռ սուրբ առաքելոյն Թադէոսի սուրբն Գրիգոր»:[61] Քրիստոսի ծնունդից հաշուած 305 թուականը նշանակում է Քրիստոսի ծնունդից 304 տարի յետոյ[62], որ, նկատի առնելով Անեցու կողմից Քրիստոսի ծնունդը Ն.Ք. 2 թուին դրուած լինելը, կը տայ Փրկչ. 303 թիւը (304 տարի–Ն.Ք. 2 թ.+1 տարի= Փ. 303 թ.):

Սամուէլ քահանայի Պատմութեան ձեռագրերից երեքում էլ կայ այսպիսի հատուած. «Ի նստելոյն յաթոռն ի ս. Ներսիսէ՝ մինչեւ ի ս. Սահակ ԽԷ (47). ամ է. եւ ի ս. Սահակայ մինչեւ ի Հայոց թուականն ՃԼԷ (137). ամ է: Ի Լուսաւորչէն մինչեւ ի Ներսէս ԿԳ (63). ամ է: Ի Ներսիսէ մինչեւ ի թուականն ՃՁԴ (184). ամ է»[63]: Ընդհանրապէս, այս հատուածը Սամուէլի Պատմութեան մէջ կարծես թէ իր տեղում չէ: Այն անմիջականօրէն կապուած չէ ո՛չ նախորդող, ո՛չ էլ յաջորդող շարադրանքներին: Այն դրուած է Քրիստոսի ծննդեան 424 թուի դիմաց՝ Պարսից Վռամ Կրմանի գահակալման սկզբի հետ, որ կապուած չէ խնդրոյ առարկայ հատուածում նշուած անցքերին: Միեւնոյն ժամանակ, այս հատուածում տրուած թուերը ճշգրիտ համընկնում են Սամուէլ քահանայի Պատմութեան բուն շարադրանքում տրուածներին (Ս. Գրիգորի աթոռակալման սկիզբը Քրիստոսի ծննդեան 307 թ., Ս. Ներսէսինը՝ 370 թ.՝ նախորդից 63 տարի անց, Հայոց թուականի առաջին տարին էլ 554 թ.՝ Ս. Ներսէսից 184 տարի յետոյ): Ըստ այս թուերի ստացւում է Ս. Գրիգորից մինչեւ Հայոց թուականը՝ 63+184=247 տարի: Այս 247-ը պիտի վերաբերի Ս. Գրիգորի կաթողիկոսութեան սկզբին: Նկատի առնելով այն, որ այս թուերը լրիւ ներդաշնակ են Սամուէլի Պատմութեան բուն շարադրանքում տրուած այլ թուերին եւ այն, որ ըստ այդ Պատմութեան Հայոց դարձը Ս. Գրիգորի աթոռակալման սկզբից 2 տարի առաջ է, հարկ է ընդունել, որ ըստ այս թուերի Հայոց դարձից մինչ Հայոց թուական պիտի լինի 247+2=249 տարի:

Ստացւում է, որ մի դէպքում, ըստ Սամուէլ Անեցու, Քրիստոսի ծնունդից

© National Library of Armenia

մինչեւ Հայոց դարձը 276 տարի է, միւս դէպքում՝ 304 տարի եւ երրորդ դէպքում

աղիւսակ 2ա

միջակայքը	ժամանակը	աղբիւրը	Փրկչ. տարին
Քրիստոսից Հայոց դարձ	276 տարի	Մեկն. տոմարի (էջ 36)	276թ.
Քրիստոսից Հայոց դարձ	312 տարի	Պատմութիւն (էջ 51)	309, կամ 311թ.
Քրիստոսից Հայոց դարձ	304 տարի	Պատմութիւն (էջ 63)	301, կամ 303թ.
Հայոց դարձ-Հայոց թուական	276 տարի	Մեկն. տոմարի (էջ 36)	276թ.
Հայոց դարձ-Հայոց թուական	241 տարի	Պատմութիւն (էջ 51)	311թ.
Հայոց դարձ-Հայոց թուական	249 տարի[66]	Պատմութիւն (էջ 69)	303թ.

էլ՝ 312 տարի: Ունենք երեք տարբեր թուեր էլ Հայոց դարձից Հայոց թուական միջակայքի համար (276, 241 եւ 249 տարի): Ինչպէ՞ս իրար համաձայնեցնել սրանք: Այս թուերի միջեւ կան լուրջ տարբերութիւններ: Այստեղ թուային վրիպակ լինել չի կարող, քանի որ բոլոր թուերն էլ տրուած են մէկից աւելի անգամներ, եւ տրուած են ոչ միայն այդ թուերը, այլ նաեւ դրանցից բխող այլ թուեր (դրանց եւ այլ թուերի գումարները, տարբերութիւնները եւ այլն), իսկ այդ բոլորը միաժամանակ սխալ լինելու հաւանականութիւնը շատ փոքր է: Միեւնոյն ժամանակ, կարող է լինել շփոթութիւն: Դա պարզելու համար աղիւսակների տեսքով դասաւորենք Սամուէլ Անեցու՝ մեզ հետաքրքրող ժամանակային տուեալները:

Եթէ Հայոց թուականից դէպի ետ հաշուարկենք, հաշուի առնելով, որ Սամուէլ Անեցին իր տոմարական մեկնութեան մէջ Հայոց թուականի դրուելը համարել է Քրիստոսի ծնունդից 552 տարի յետոյ, իսկ իր Պատմութեան մէջ էլ այդ

աղիւսակ 2բ

միջակայքը	ժամանակը	աղբիւրը
Քրիստոսից Հայոց դարձ	552–276 = 276 տարի	Մեկն. տոմարի
Քրիստոսից Հայոց դարձ	553–241 = 312 տարի	Պատմութիւն
Քրիստոսից Հայոց դարձ	553–249 = 304 տարի	Պատմութիւն

նոյն միջակայքը համարել է 553 տարի, ապա 2ա աղիւսակի վերջին երեք տողերի թուերն էլ կը տան.

Այս աղիւսակների համեմատութիւնից երեւում է, որ Քրիստոսի ծնունդից

Ս. Գրիգոր միջակայքի համար 2բ աղիւսակի թուերը (հաշուած ըստ Հայոց թուականի) նոյնաբար համընկնում են 2ա աղիւսակի համապատասխան թուերին (տրուած՝ անմիջականօրէն՝ իբր Քրիստոսի ծնունդից):

Այսպիսով, ունենք երեք թուեր Քրիստոսի ծնունդից մինչ Հայոց դարձը եղած միջակայքի համար (276, 312, եւ 304 տարի): Ինչպէ՞ս իրար համաձայնեցնել այս երեք թուերը, կամ ի՞նչ կերպ որոշել, թէ սրանցից որն է Հայոց դարձի ժամանակը ըստ Սամուէլ Անեցու:

Սամուէլ քահանայի Պատմութեան մէջ Ս. Գրիգորի ձեռնադրումը դրուած է 307-ին՝ Քրիստոսի ծնունդից, որ նշանակում է, թէ Քրիստոսի ծնունդից մինչ Ս. Գրիգորի ձեռնադրումը 306 տարի է: 276-ի եւ 306-ի տարբերութիւնը 30 տարի է: Այս 30-ամեայ տարբերութիւնը կարելի է բացատրել երկու կերպ.

ա. 30 տարին Քրիստոսի մկրտուելու տարիքն է ըստ որոշ հեղինակների[65]: Ուստի, կարող ենք մտածել, որ այս դէպքում հաւանաբար շփոթել են Քրիստոսի ծննդեան եւ մկրտութեան ժամանակները, եւ Ս. Գրիգորի վիրապից ելնելն էլ շփոթել է նրա ձեռնադրութեան հետ: Այսինքն, պիտի համարենք, որ «Մեկնութիւն Տումարի» երկում Սամուէլ քահանայի նայի տուած 276 տարին՝ իբր Քրիստոսի ծնունդից մինչեւ Հայոց դարձը իրականում վերաբերում է ոչ թէ Քրիստոսի ծնունդից հաշուած ժամանակին, այլ Քրիստոսի մկրտութիւնից հաշուած ժամանակին: Այսպիսի շփոթութիւնը հաւանական է, եթէ ի նկատի ունենանք, որ Սամուէլ Անեցու՝ խնդրոյ առարկայ երկերում առկայ այս տուեալները կարող էին վերցուած լինել տարբեր ժամանակագրական համակարգերով շարադրուած տարբեր աղբիւրներից: Եթէ ընդունենք այս շտկումը, ապա կը ստացուի, որ ըստ Սամուէլ Անեցու Հայոց դարձը դրուած է Քրիստոսի ծնունդից 304 տարի յետոյ: Սա էլ կը տայ Փրկչ. 304–2+1 =303 թուականը:

բ. Բացատրութեան միւս տարբերակը այն է, որ 30 տարի է նաեւ հէնց Ս. Գրիգորի աթոռակալութեան տեւողութիւնը: Ըստ այսմ էլ կարելի է համարել, որ Սամուէլ քահանայի օգտագործած աղբիւրներից մէկում շփոթուած են եղել Ս. Գրիգորի գահակալման սկիզբն ու վերջը: Այս պարագայում հարկ կը լինի ընդունել, որ Սամուէլ քահանան Հայոց դարձը դրել է Քրիստոսի ծնունդից 276 տարի յետոյ, որ անում է Փ. 276 թ., եւ 306 թուականն էլ այս դէպքում Ս. Գրիգորի կաթողիկոսութեան աւարտն է, որ սկզբնաղբիւրների հետ կապուած պատճառներով շփոթուել է նրա աթոռակալման սկզբին:

Ի դէպ, այս երկու դէպքերում էլ կարող ենք սեպել, թէ հէնց այս 30-ամեայ շփոթութիւնն է պատճառ դարձել, որ իրար հետ շփոթուեն Հայոց դարձն ու Ս. Գրիգորի ձեռնադրութիւնը:

Այս երկու տարբերակներից որ մէկի ճիշդ լինելը պարզելու համար նայենք, թէ սրանցից ո՞րն է առաւել ներդաշնակ Սամուէլ քահանայի Պատմութեանն ու տոմարական մեկնութեանը միաժամանակ:

Ըստ առաջին տարբերակի Հայոց դարձը ստացւում էր Փ. 303 թուին՝ Քրիստոսի ծնունդից 304 տարի յետոյ: Այս թիւը, ինչպէս վերը տեսանք, չի հակասում Պատմութեան ընդհանուր շարադրանքին: Միեւնոյն ժամանակ, այն նաեւ հնարաւոր է համաձայնեցնել տոմարական մեկնութեան տուեալներին, ընդունելով, որ շփոթուած են Քրիրստոսի ծնունդն ու մկրտութիւնը:

© National Library of Armenia

Երկրորդ տարբերակի համաձայն էլ Հայոց դարձը լինում է Փ. 276 թուին: Ա՛յս դէպքում հարկ է ընդունել, որ Ս. Գրիգորի աթոռակալութեան աւարտը Փ. 306-ին է: Սա, մեղմ ասած, այնքան էլ չի ներդաշնակում Պատմութեան ընդհանուր շարադրանքին: Այս տուեալը ընդունելու պարագայում հարկ է սխալ սեպել Պատմութեան ժամանակային բազմաթիւ տուեալներ, որով եւ ա՛յս տարբերակը այնքան էլ հաւանական չէ: Ըստ այսմ, հարկ է ընդունել առաջին տարբերակը. Հայոց դարձը Փ. 303-ին:

բական այլ տուեալների: Այս մասում իրար ետեւից շարադրուած են ժամանակագրական 12 տեղեկութիւններ, բոլորն էլ՝ ըստ «եօթանասնից»[66] համակարգի: Ընդ որում, այդ 12 թուերից 10-ը ճշգրտօրէն համընկնում են եօթանասնից համակարգի ստոյգ թուերին[67]: Բացառութիւն են միայն խնդրոյ առարկայ երկու թուերը, որոնց համար էլ տողատակում նշուած են այլ տարբերակներ՝ ըստ միւս ձեռագրերի[68]: Արդ աղիւսակի տեսքով տանք այս երկու թուերն իրենց բոլոր տարբերակներով:

	ըստ Սամուէլի Պատմութեան բուն շարադրանքի	ըստ այլ ձեռագրերի տարբերակի	ըստ եօթանասնից համակարգի
Քրիստոսի ծննդից Հայոց դարձ	318(ՅԺԸ)	312(ՅԺԲ)	302(ՅԲ)
Հայոց դարձից Հայոց թուական	242(ՄԽԲ)	241(ՄԽԱ)	252(ՄԾԲ)

Արդ, փորձենք քննել Քրիստոսի ծնունդից Հայոց դարձ 312 տարին: Այս 312-ը ստացուել էր Սամուէլի Պատմութեան սկզբնամասի մի հատուածից. «Ի ծննդեանէ Քրիստոսի մինչեւ ցսուրբն Գրիգոր ամք ՅԺԲ (312). եւ անտի ի Հայ թուականն ամք ՄԽԱ (241)»: Այս հատուածում տրուած թուերն էլ վերցրել էինք ըստ տողատակում տրուած տարբերակների (տե՛ս ծնթ. 54 եւ 60): Նկատենք սակայն, որ նոյնիսկ այս երկու թուերը ըստ այլ ձեռագրերի տարբերակի վերցնելու պարագայում դրանց գումարը, որ տալիս է 312+241=553 տարի, 1 տարով աւելի է Պատմութեան բուն շարադրանքում Քրիստոսի ծննդից Հայոց թուական միջակայքի համար տրուածից: Այստեղ յիշենք նաեւ այն, որ սոյն հատուածը Սամուէլի Պատմութեան սկզբնամասում է, ուր այն դրուած է ի շարս ժամանակագ-

Ինչպէս երեւում է աղիւսակից, ունենք թուերի կատարեալ անհամաձայնութիւն: Այստեղ հնարաւոր է երկու տարբերակ. կամ Պատմութեան այս մասում նախապէս եղել են հէնց եօթանասնից համակարգի թուերը (302 եւ 252 տարի), որ յետոյ աղաւաղուելով վեր են ածուել 318-ի եւ 242-ի, եւ կամ էլ այս ամբողջ նախադասութիւնը Պատմութեան սոյն տեղում յետսամուտ է եւ ներմուծուած է այլուստ:

Առաջին տարբերակի օգտին է նախ այն, որ այս թուերը գրուած են ի շարս եօթանասնից համակարգով տրուած այլ թուական տուեալների, որից պէտք էր ենթադրել դրանց եւս այդ համակարգին պատկանելը, այսինքն՝ համապատասխանաբար 302 եւ 252 լինելը: Սրա օգտին է եւ այն, որ 302(ՅԲ)-ից 318(ՅԺԸ) առաջանալուն կարող էր նպաստել Բ«Ը (2«8)

շատ հաւանական աղաւաղումը, թէպէտ դիւրին չէ 10-ի (Ժ-ի) ներմուծումը բացատրելը: Դժուարութիւն է յարուցում նաեւ 252→242 (ՄԾԲ→ՄԽԲ) անցումը: Ծ եւ Խ գրերը իրար այնքան էլ նման չեն, թէպէտ որոշ գրատեսակների պարագայում Ծ-ից ձախ ուղղաձիգ սեան նման բծի յառաջացումը եւ Ծ-ի վերնամասի ջնջումը կարող էին Խ-ի որոշ նմանութիւն ստեղծել: Մի նկատառում եւս. Պատմութեան այս հատուածը, փաստօրէն, ժամանակագրական կանոն է՝ կարեւորագոյն իրադարձութիւնների ժամանակներով, եւ, ըստ այդմ, սպասելի է, որ այդ կանոնում առկայ լինէր նաեւ Հայոց դարձի ու Հայոց թուականի հիմնման ժամանակը՝ հաշուած Քրիստոսի ծնունդից:

Երկրորդ տարբերակը՝ նախադասութեան յետսամուտ լինելը եւս անհաւանական չէ: Ամէն դէպքում, հարկ է ընդունել, որ Սամուէլ քահանայի այս երկու թուական տուեալները հեղինակային չեն, ուստի եւ դրանք չենք քննի: Բնականաբար, չենք քննի նաեւ համապատասխան 312 տարին:

Այսպիսով, մնում են Հայոց դարձի ժամանակի համար Սամուէլ քահանայի տուած թուերի երկու տարբերակները, որ, ինչպէս վերը տեսանք, կարելի է իրար ներդաշնակեցնել, ընդունելով, որ շփոթուած են Քրիստոսի ծնունդն ու մկրտութիւնը: Ըստ այսմ ստանում ենք, որ Սամուէլ Անեցին Հայոց դարձը դրել է Փ. 303 թուին, իսկ Ս. Գրիգորի կաթողիկոս ձեռնադրուելն էլ՝ Փ. 305-ին:

Յակոբ Ղրիմեցուց մեզ հասած եւ հրատարակուած երկերում Հայոց դարձի ժամանակի մասին ունենք միայն «Մեկնութիւն Տումարի» գործում[69]: Այստեղ ի շարս ժամանակագրական այլ տեղեկութիւնների տրուած է. «Ի ծննդեանէն Քրիստոսի մինչեւ ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ՅԺԲ.(312) եւ անտի մինչ ի Հայ թուականն ՄԽԱ.(241): Ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ի գիւտ հայ գրոյս ՇԺԶ.(116), եւ ի գիւտ գրոյս մինչեւ ի թուականն ՇԼ.(130) ,...ի ծննդենէն Քրիստոսի ի Հայ թուականն ՇԾԳ.(553),...»[70]: Այստեղ Ս. Գրիգորի ժամանակը տրուած է երեք կերպ. Քրիստոսի ծննդեան տարիներով, Հայոց գրերի գիւտի ժամանակով եւ մինչ Հայոց թուական անցած ժամանակով: Հաշուարկման այս երեք մեկնակէտերից, սակայն, առանց յատուկ քննութեան կիրառելի է միայն մէկը՝ Հայոց թուականի սկիզբը: Բանն այն է, որ Հայոց գրերի գիւտի մասին Ղրիմեցին այլ տուեալ չի տալիս, որով՝ գրերի գիւտի ժամանակը ի՛նքն է որոշւում այս տեղեկութեան միջոցով: Իսկ Քրիստոսի ծննդեան ժամանակն էլ, որպէսզի դառնայ կիրառելի իբր հաշուարկի մեկնակէտ, հարկ է, որ ճշգրտուի, թէ ըստ Յակոբ Ղրիմեցու երբ է դրուած Քրիստոսի ծնունդը: Փորձենք պարզել այս մէկը:

Իր «Հարցումն Գէորգ բարձունապետի եւ ծառայաբար կատարումն Յակոբ աշակերտի» աշխատութեան մէջ Յակոբ Ղրիմեցին մանրամասն քննութեամբ ճշդում է հինգ կարեւոր օրերի՝ Եղիսաբեթի յղութեան, Աստուածածնի աւետման, Փրկչի ծննդեան, Մկրտութեան եւ Խաչելութեան օրերը[71]: Այստեղ Աւետումը դրուած է Հայոց ՇԷ(507) թուին[72], Քրիստոսի ծնունդը Հայոց ՇԸ(508)-ին, Յունուարի 6-ին, օրը հինգշաբթի[73], Մկրտութիւնը Ծնունդից 30 տարի անց՝ Հայոց Զ.(6)-ին եւ Խաչելութիւնն էլ Հայոց Թ.(9)-ին[74]: Այս թուերը նոյնաբար համընկնում են այդ նոյն իրադարձութիւնների համար Յովհաննէս Սարկաւագի տուած թուերին[75]: Ինչպէս ժամանակին պարզուած էր, Սարկաւագ վարդապետը 532-ամեակներով պարբերացրել էր Հայոց Մեծ

© National Library of Armenia

թուականը եւ այդ կերպ կիրառել այն նաեւ Հայոց Մեծ թուականի հիմնմանը նախորդած ժամանակների համար[76]: Ա-հա, Հայոց Մեծ թուականի հէնց այդպիսի պարբերացուած կիրառման մի օրինակ է եւ Յակոբ Ղրիմեցու կատարած՝ այս հինգ օրերի որոշումը Հայոց Մեծ թուականով: Նշուած հինգ իրադարձութիւնների համար Ղրիմեցու տուած տարեթուերը ճշգրիտ համընկնում են Սարկաւագի տուած թուականներին: Ըստ այս թուերի Յակոբ Ղրիմեցին (իր այս աշխատութեան մէջ) Քրիստոսի ծնունդը դրել է այն ժամանակին, որում որ դրել է Սարկաւագը[77]: Իսկ Սարկաւագի ժամանակագրական համակարգի քննութեամբ գիտենք, որ Հայոց պարբերացուած ՇԸ(508) թուականի Հոռի 10-ը եւ դրան համապատասխանող՝ ըստ հինգհարիւրեակի 5420-ի Յունուարի 6-ը զուգակշիռ են Ն.Ք. 5 թ. Յունուարի 6-ին, որ իրօք եղել է հինգշաբթի[78]: Ուրեմն, Յակոբ Ղրիմեցին իր այս աշխատութեան մէջ Քրիստոսի ծնունդը դրել է Ն.Ք. 5 թուին: Իսկ այստեղից մինչ Հայոց թուականի սկիզբը՝ Փ. 552 թ. Յուլիսի 11-ը 556 տարի է (552+5–1=556): Սա ակնյայտօրէն չի ներդաշնակում Քրիստոսի ծննդից Հայոց թուական միջոցի համար Ղրիմեցու տուած 553 տարուն եւ ընդհանրապէս՝ վերոբերեալ հատուածում տրուած թուերին: Քրիստոսի ծննդից Հայոց թուական 556 տարին ստացւում է նաեւ առանց տարիների գումարը հաշուելու՝ զուտ պարբերացուած Հայոց թուականների վերլուծութիւնից: Այսպէս. Հայոց 508 թուականը նշանակում է, որ դա Հայոց թուականի սկզբից 556 տարի առաջ է. պարբերութիւնից (532 տարուց) հանենք տարեթիւը, կը ստանանք, թէ ամբողջ թուով պարբերութիւններից զատ քանի յաւելեալ տարի կայ մինչ Մեծ թուականի հիմնումը 532–508=24: Ստացուած 24 տարուն գումարենք մէկ պարբերութիւն (532 տարի) եւ կը ստանանք Քրիստոսի ծնունդից Հայոց թուականի սկիզբն եղած տարիների քանակը. 532+24=556[79]: Իսկ վերի հարուածում ե՛ւ առանձին 553 է տրուած, ե՛ւ էլ միջանկեալ տարիների գումարն է տալիս 312+241=553: Պարզելու համար, թէ իրար չներդաշնակող այս թուերից որի՛ն պիտի նախապատուութիւն տանք, նայենք, թէ իր տոմարական մեկնութեան մէջ խնդրոյ առարկայ տեղիին կից ուրիշ ինչ թուեր է տալիս Ղրիմեցին: Խնդրոյ առարկայ հատուածից մի քանի տող վերը տրուած են. «յԱդամայ ի ջրհեղեղն ՍՄԽԲ.(2242) ամ է, ի ջրհեղեղէն ի յաշտարակն ՇԻԵ.(525), անտի յԱբրահամն ՆԺԷ.(417), յԱբրահամէ ի Մովսէս, յելսն Եգիպտոսէ ՇԷ.(507): Եւ յելիցն մինչեւ ի Սողոմոն եւ ցառաջին շինուած տաճարին ՆՁ.(480) եւ յառաջին շինուածոյն մինչեւ ցերկրորդն ՇԺԱ.(511) եւ անտի ի ծնունդն Քրիստոսի ՇԺԸ.(518), որոյ շարադրութիւն լինի յԱդամայ ի ծնունդն Քրիստոսի ՐՃՂԸ.(5198)»[80]: Այս թուերը բոլորը ճշգրիտ տրուած եօթանասնից ժամանակագրական համակարգի թուեր են[81]: Սա մտածել է տալիս, որ այդ թուերին յաջորդող թուերը եւս լինեն միեւնոյն ժամանակագրական համակարգով տրուած: Սակայն այդպէս չէ. Սրան անմիջապէս յաջորդում է վերոբերեալ հատուածը, ուր տրուած թուերը եօթանասնից համակարգով չեն: Այսպէս. ըստ եօթանասնից Քրիստոսի ծննդից մինչ Հայոց թուական պիտի լինի 554 տարի, Քրիստոսի ծննդից Ս. Գրիգոր 302 տարի եւ Ս. Գրիգորից էլ Հայոց թուական 252 տարի[82]: Արդ աղիւսակի տեսքով տանք Ղրիմեցու այս մի քանի թուերը եւ դրանց տարբերակները ըստ տարբեր համակարգերի:

	ըստ եօթանասնից	ըստ Շ.եկի	Յակոբ Ղրիմեցի, «Մեկն. տումարի»
Քրիստոսի ծննդից Հայոց Թուական	554	556	553
Քրիստոսի ծննդից Ս. Գրիգոր	302	304	312
Ս. Գրիգորից Հայոց Թուական	252	252	241

Ինչպէս երեւում է աղիւսակից, այս հատուածում Ղրիմեցու երկում առկայ թուերը ներդաշնակ չեն ոչ եօթանասնից, ոչ էլ Շ.եակի համակարգերին: Մինչդեռ սպասելի էր, որ Յակոբ Ղրիմեցին իր տուած թուերը տար ըստ այդ համակարգերից մէկն ու մէկի: Ինչպէս վերը տեսանք, տոմարական մեկնութեան մէջ այս թուերին նախորդում են եօթանասնից համակարգով տրուած ստոյգ թուեր, իսկ «Հարցումն Գէորգ րաբունապետի եւ...» երկում էլ Քրիստոսին վերաբերող մի շարք թուեր տրուած են Շ.եակի համակարգով: Ըստ այսմ, ենթադրելի է, որ բնագրի այս հատուածում գործ ունենք ձեռագրական աղաւաղման հետ: Սրա օգտին է եւ այն, որ նոյն հատուածում տրուած միւս երկու թուերից գոնէ մէկը ակնյայտօրէն աղաւաղուած է (տե՛ս վերը՝ ծանօթ. 72):

Ընդհանրապէս, Յակոբ Ղրիմեցուց մեզ հասած երկերում նկատւում է Հայոց թուականին եւ Քրիստոսի ծննդեանը վերաբերող թուերի որոշ անհամաձայնութիւն:

Այսպէս, «Ի խնդիրս հասարակաց օգտի» երկում Հայոց թուականի սկզբի համար տրուած է Ադամից 5976 եւ Քրիստոսի ծննդից 553 տարի անց[83]: Այս 5976-ը Հայոց թուականի սկիզբն է ըստ Շ.եակի համակարգի, իսկ 553-ը այդ համակարգի հետ կապ չունի:

«Հարցումն Գէորգ րաբունապետի եւգ» երկում էլ Հայոց թուականի սկզբի համար տրուած են մի քանի թուեր տարբեր համակարգերով, որոնք ոչ բոլորն են ստոյգ: Այսպէս, տրուած է «...ըստ կայսերական պատմութեան՝ ՐՁԿԱ.(5761), եւ ըստ Անանիայ Ծիրակունոյ ՐՃՂԸ.(5198), ...եւ ըստ Շ.եկին՝ ՐՋՀԶ.(5976)»[84]: Այստեղ միայն 5976-ն է ճիշդ տրուած: 5761-ը Էսսեան հինգհարիւրեակի սկիզբն է ըստ եօթանասնից համակարգի: 5198-ն էլ, որ տրուած է իբր Հայոց թուականի սկիզբ, իրականում Քրիստոսի ծննդեան տարին է դարձեալ եօթանասնից համակարգով: Ի դէպ, իր տոմարական մեկնութեան վերոբերեալ հատուածում այդ թիւը հէնց իբր Քրիստոսի ծննդեան տարի էլ տրուած է: Այսինքն, կայ անհամաձայնութիւն թէ՛ Յակոբի տարբեր երկերում առկայ թուերի, եւ թէ՛ այդ թուերի ու Շ.եակի եւ եօթանասնից համակարգերի թուերի միջեւ:

Այս ամէնը մտածել են տալիս, որ Յակոբ վարդապետի երկերում առկայ այս թուերը մեզ են հասել էապէս աղաւաղուած: Ամէն դէպքում Քրիստոսից Ս. Գրիգոր 312-ն ու Ս. Գրիգորից Հայոց թուական 241-ը պիտի համարենք ոչ հարազատ եւ ուրեմն, ոչ արժանահաւատ: Ուստի, չենք կարող ըստ դրանց դատել, թէ երբ է Յակոբ Ղրիմեցին դրել Հայոց

© National Library of Armenia

դարձը:

Առաւելագոյնը, որ կարող ենք ասել հետեւեալն է: Քանի որ Քրիստոսի ծնունդը Յակոբը տուել է հինգհարիւրեակի եւ Հայոց թուականի համակարգերով, ընդ որում՝ յոյժ մանրակրկիտ, Իսկ տոմարական մեկնութեան մէջ էլ ժամանակագրական տեղեկութիւնները տուել է գերազանցապէս եօթանասնից համակարգով, ապա կարող ենք համարել, որ Հայոց դարձի ժամանակն էլ նա պիտի դրած լինի ըստ այդ համակարգերից մէկն ու մէկի: Ըստ հինգհարիւրեակի Հայոց դարձը եղել է արարչութիւնից 5724 եւ Քրիստոսի ծննդից 304 տարի անց: Ըստ եօթանասնից էլ դա եղել է Ադամից 5500 եւ Քրիստոսի ծննդից 302 տարի անց[85]: Այդ չորս թուերն էլ հաապատասխանում են Փրկչ. 298 թուին[86]: Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ Յակոբ Ղրիմեցին Հայոց դարձը ամէնայն հաւանականութեամբ դրել է Փրկ. 298-ին:

Որոշ վերապահութեամբ տոմարագէտ-հեղինակից մեզ աւանդուած սկզբնաղբիւր կարող ենք սեպել նաեւ հայերէն հնագոյն թղթեայ ձեռագրով մեզ հասած ժամանակագրութիւնը[87]: Այս ժամանակագրութեան մի մասը ժամանակին հրատարակուել է վերագրուելով ԺԳ դարում ապրած Յովհաննէս Աւագերէցին[88]: Ժամանակագրութիւնը կազմել է 986 թուին Դաւիթ քահանան տարբեր աղբիւրներից քաղուած տուեալներով: Մեզ հետաքրքրող հատուածը (Քրիստոսի ծննդից մինչ Հայոց թուականի սկիզբը) վերցուած է եղել Եւսեբիոսից եւ Աթանաս Տարօնացուց, ընդ որում, այդ հատուածի հայկական տուեալները՝ միայն Աթանաս Տարօնացուց[89]: Այս արժէքաւոր երկը մեզ է հասել երկու հատուածի բաժանուած. առաջինը արձակ շարադրանք է կազմուած Դաւիթ քահանայի կողմից եւ ձեռագրի բուն գրչի՝ Ղուկասի ձեռամբ գրուած շուրջ 986 թուին: Երկրորդ հատուածը ԺԱ դարում Դաւթի կազմածից (Ղուկասի գրածից) համառօտել եւ աղիւսակի է վերածել Գորգ անուն մի անձ (հաւանաբար՝ Գորգ Շիրակացին[90]): Այսինքն, այս ժամանակագրութեան մեզ հետաքրքրող մասի նախնական հեղինակ պէտք է համարենք Աթանաս Տարօնացուն:

Հայոց թուականի սկիզբը դրուած է Քրիստոսի ՇԾԶ(556)-ին[91]: Այստեղ տրուած է նաեւ «ՅԱդամա ցնոր թվականս ամք ՅՇԾԶ(6156). դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս յԼԴ(34) ամես Յուստիանոսի կայսեր եւ ՅԴ(304) էր Հոռոմի թուականս»[92]: Այստեղ տարակուսելի է միայն Քրիստոսի 556-ի եւ Հայոց թուականի սկզբի արանքում Յուստինիանոսի եւ Մովսէս կաթողիկոսի 13 տարիները դնելը, որն ամէնայն հաւանականութեամբ սոյն ժամանակագրութիւնը աղիւսակների վերածող Գորգի շփոթութեան-սխալման արդիւնքն է: Հռոմի 304-ը Հռոմի հիմնադրման երկրորդ հազարամեակի տարին է, որ համապատասխանում է Փրկչ. 552-ին[93]: Քրիստոսի ծննդից 556-ն էլ Քրիստոսից Հայոց թուական ժամանակն է ըստ հինգհարիւրեակի համակարգի, եւ որպէս այդպիսին ճիշդ է: Ադամի 6156-ն էլ արարչութեան թուականն է Անդրէաս Բիւզանդացու ժամանակագրական համակարգով: Այդ նոյն համակարգով է տրուած եւ Քրիստոսի ծնունդը ժամանակագրութեան չհամառօտուած մասում. «Յադամայ ցծնունդն Քրիստոսի ՐՈ(5600) ամ եւ լինի թուական հոռոմի ՄԶ(28), իսկ հայոյ ՇԸ(508) եւ ծնունդն ի հոռի Ժ(10)»[94]: Այս թուերը բոլորն էլ ներդաշնակ են հինգհարիւրեակի համակարգին. 6156–5600=556 տարի, որ Քրիստոսի ծննդից Հայոց թուական եղած տարիների քանակն է Շ.եակի համակարգով:

Այս երկում Ս. Գրիգորի «Ելն ի Վիրապէն» դրուած է Քրիստոսի ծննդեան ՅԴ(304) տարում, որին զուգակշիռ են Տրդատի ԺԵ (15)-րդ եւ Դիոկղետիանոսի ԺԵ (15)-րդ տարիները[95]: Սրանից մէկ տարի անց էլ՝ Քրիստոսի ՅԵ(305)-ին եւ Տրդատի ԺԶ(16)-ին դրուած է «Տրդատ պատուհասի յԱստուծոյ»[96] եւ Ս. Գրիգորի կաթողիկոս ձեռնադրուելը. «Ս. Գրիգոր ամս Լ(30)»[97]: Ս. Գրիգորի առաջին տարին զուգակշիռ է դրուած Տրդատի 16-ին եւ Քրիստոսի 305-ին: Այստեղ ակնյայտ է աններդաշնակութիւնը. Վիրապից Ս. Գրիգորի ելքը չէր կարող լինել Տրդատի պատուհասուելուց առաջ, այլ պէտք է յաջորդէր դրան: Ուրեմն, աղիւսակում որոշ իրադարձութիւնների տեղերը խախտուած են դրանց տարիների նկատմամբ: Այս դէպքում ճիշդը տարիների զուգակշռութեամբ առաջնորդուելն է: Ըստ այսմ կ'ունենանք հետեւեալը: Ս. Գրիգորի կաթողիկոսութեան Ա(1) տարին դրուած է Տրդատի ԺԶ(16)-ին եւ Քրիստոսի ՅԵ(305)-ին հաւասար: Եւ, քանի որ Ս. Գրիգորի ելն ի վիրապէն պիտի եղած լինի նրա կաթողիկոս լինելուց առնուազն 1 կամ 2 տարի առաջ, ապա Հայոց դարձն էլ (Ս. Գրիգորի ելն ի վիրապէն) պիտի եղած լինի ըստ այս աղիւսակի Քրիստոսի 303-ին կամ 304-ին: Նկատի ունենալով, որ այստեղ Քրիստոսի ծնունդը եւ Հայոց թուականի սկիզբը դրուած են ըստ Շ.եակի համակարգի (Քրիստոսի ծննդից Հայոց թուականի սկիզբը 556 տարի), ապա կը լինի Հայոց դարձը 303–5+1=299թ., կամ 304–5+1=300թ., այսինքն, Հայոց դարձը լինում է Փրկչական 299-ին կամ 300-ին: Աւելի ստոյգ չենք կարող որոշել, քանի որ Աթանասի ժամանակագրութիւնը մեզ է հասել կրկնակի միջամտութեամբ. նախ Դաւիթ քահանայի կողմից Եւսեբիոսի ժամանակագրութեանը միախառնուած եւ ապա Գորգի կողմից համառօտուած, աղիւսակի վերածուած, որով որոշ տեղեկութիւններ կորած են եւ որոշներ էլ աղաւաղուած:

Այս ամէնը ցոյց են տալիս, որ Աթանաս Տարօնացին Հայոց դարձը դրել է Փրկչական 299-ին կամ 300-ին:

Արդ ի մի բերենք ստացուած արդիւնքները աղիւսակի տեսքով:

	Հեղինակը	Հայոց դարձի ժամանակը	Նշումներ
Ա	Աթանաս Տարօնացի	299թ. կամ 300 թ.	Ըստ Դաւիթ քահանայի եւ Գորգի վերաշարադրման
Բ	Անանիա Շիրակունի	284-305 թթ.	Դիոկղետիանոսի օրօք
Գ	Ստեփանոս Ասողիկ	299թ. կամ 300 թ.	
Դ	Յովհաննէս Կոզեռն	276 թ.	
Ե	Յովհաննէս Սարկաւագ	298 թ.	
Զ	Սամուէլ Անեցի	303 թ.	
Է	Յակոբ Ղրիմեցի	298 թ.	Ամենայն հաւանականութեամբ

Ի՞նչ կարող ենք եզրակացնել այս աղիւսակից: Տեսնում ենք, որ հայ տոմարագէտ-հեղինակները Հայոց դարձը դրել

© National Library of Armenia

են ոչ միակերպ: Եթէ զանց առնենք Անանիային, որի տուեալները խիստ ընդարձակ միջակայք են տալիս, ապա մնացեալների մասին կարող ենք նկատել հետեւեալը: Իրենց տուած թուերով մնացեալներից զատւում են Սամուէլ Անեցին եւ Յովհաննէս Կոզեռնը: Անեցու երկը պարունակում է իրարամերժ տուեալներ, եւ մինչեւ Անեցու կիրառած բուն ժամանակագրական համակարգի քննութիւնը անհնար է աւելի ստոյգ պարզել, թէ երբ է ըստ նրա Հայոց դարձը: Գալով Կոզեռնին, նրանից մեզ հասած երկերի աղքատութիւնը կարող է պատճառ լինել թիւրիմացութեան: Նրա անունով միայն մի՛ երկում ունենք Հայոց դարձի մասին տուեալներ, որոնց հեղինակային հարազատութեան մասին դժուար է դատել առանց յաւելեալ տուեալների: Աթանասի, Անողիկի, Սարկաւագի եւ Ղրիմեցու տուեալները իրար մեծապէս ներդաշնակ են. նրանք բոլորն էլ Հայոց դարձը դրել են Փ.298-300թթ. միջակայքում: Զուգեռնալով աւելի մանրակրկիտ քննութեան հնարաւորութիւն, առայժմ կը սահմանափակուենք այսքանով ու կարող ենք եզրակացնել, որ հայ տոմարագէտ-հեղինակները Հայոց դարձը դրել են Փ. 298-300 թթ. միջակայքի տարիներում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

* ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումեանի Տուն-Թանգարան, ՀՀ, 378433, Արագածոտնի մարզ, գ. Բիւրական, Էլ. հասցէ՝ gbrout@bao.sci.am

1 Ճշգրիտ լինելու համար նկատենք, որ Տրդատ Մեծի եւ Գրիգոր Լուսաւորչի իրագործած Հայոց դարձը կատարուել է միայն Մեծ Հայքի թագաւորութիւնում, որը, թէպէտ բուն Հայաստանի մեծ մասն է, բայց եւ այնպէս՝ ամբողջը չէ: Տրդատի եւ Ս. Գրիգորի յեղաշրջող գործունէութիւնը չէր կարող տարածուել Փոքր Հայքի, Կոմագենի եւ այլ հայկական տարածքների վրայ, որոնք պատմական ու քաղաքական հանգամանքների բերումով այդ ժամանակ դուրս էին մնացած Հայոց միասնական պետութիւնից եւ ընդգրկուած էին այլ պետութիւնների կազմում:

2 **Ռուբէն Մանասերեան**, *Հայաստանը Արտաւազդից մինչեւ Տրդատ Մեծ*, «Արեգ», Երեւան, 1997, էջ 198-201:

3 **Մովսէս Խորենացի**, *Հայոց Պատմութիւն*, թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ ակադ. Ստ. Մալխասեանի, Հայպետհրատ, Երեւան, 1961 գրքի յաւելուածում, էջ 422-424:

4 Տե՛ս նոյն տեղում, էջ 423-424:

5 **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում* (առաջին հրատ.՝ Կոստանդնուպոլիս, 1912), Պէյրութ, հ. Ա, 1959, սիւն 82-84:

6 Նոյն տեղում, սիւն 82:

7 Այստեղ այս 301 թիւը եւ յաջորդ 302-ը պայմանական են. տրուած են ըստ Մ. Օրմանեանի կազմած ժամանակագրութեան:

8 Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, նշ. աշխ., սիւն 82:

9 **Գրիգոր Բրուտեան**, *Քրիստոսի ծննդեան թուականն ըստ Հայ մատենագրական աւանդոյթի*, «Էջմիածին», Ը, 1998, էջ 73-88:

10 Տե՛ս նոյն տեղում:

11 Նոյն տեղում:

12 Ներկայումս այս հեղինակի անունը ընդհանրապէս ընդունուած է գրել *Շիրակացի* ձեւով: Սակայն այստեղ օգտագործում եմ *Շիրակունի* ձեւը, հիմք ընդունելով այն, որ Անանիան ինքն է օգտագործել այդ ձեւը, եւ ապա նրան այդպէս են կոչել Յովհ. Սարկաւագը եւ հին շրջանի այլ հեղինակները:

13 Հեղինակը իմանալու պարագայում կարելի կը լինէր միասնաբար քննել միեւնոյն հեղինակից մեզ հասած բոլոր տեղեկութիւնները եւ, վերականգնելով տուեալ հեղինակի նախնական ժամանակագրական համակարգը, ըստ այդ համակարգի էլ ճշդել առանձին ժամանակային տուեալները:

14 Բարդեշու անձնանուն յայտնի չէ: **Հր. Աճառեան**, *Հայոց Անձնանունների բառարան*, հ. Ա, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1942, այսպիսի անուն չկայ: Կարելի է ենթադրել, որ սա աղաւաղումն է *Բրքիշոյ* անուան, որն ունի ասորական ծագում, եւ որի՝ մեզ հասած տարբերակներից են *Բարգիշու, Բարդիշուն, Բրգիշոյ* եւն: Տե՛ս Աճառեան, նշ. աշխ., էջ 425-426: Այս տարբերակներից առաջինը՝ *Բարգիշու* միայն մի տառով է տարբեր սոյն բնագրի տուածից, եթէ ի նկատի ունենանք, որ *գ* եւ *դ* գրերը դիւրաւ կարող էին շփոթուել իրար հետ (*Բարգիշու→Բարդիշու→Բարդեշու*):

15 Տե՛ս **Աշ. Աբրահամեան**, *Տոմարատիեզերագիտական երեք բնագրեր*, Բնագիտութեան եւ տեխնիկայի պատմութիւնը Հայաստանում, հ. 7, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 63:

16 Սիւնեաց Պետրոս քերթող եւ Մամիկոնէից Ներշապուհ եպիսկոպոսների մասին յայտնի է, որ նրանք մասնակցել են Դուինի ժողովին, ուր կարգադրուել է Հայոց օրացոյցը: Տե՛ս, օր., Աճառեան, նշ. աշխ., հ. Դ, էջ 29, 242:

17 Տե՛ս **Աշ. Աբրահամեան**, *Անանիա Շիրակացու մատենագրութիւնը*, ՀՍՍՌ Մատենադարանի հրատ., Երեւան, 1944, (այսուհետեւ՝ Անանիա Շիրակացի) էջ 385:

18 Ընդհանրապէս, այս պատմութեան՝ Անանիայի հեղինակած լինելը վիճարկուել՝ է. տե՛ս **Հր. Բարթիկեան**, *Անանիա Շիրակացուն վերագրւող «Ժամանակագրութեան» եւ նրա բանաքաղի հարցի շուրջը*, «Բանբեր Մատենադարանի», թիւ *8*, 1967, էջ 57-77: տե՛ս նաեւ **Արտաշէս Մաթեւոսեան**, *Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ Դաւթի Քահանայի*, նմանատպութիւն, ուսումնասիր., վերծան., ծանօթագր. եւ ցանկեր աշխատասիրութեամբ Արտաշէս Մաթեւոսեանի, «Նաիրի», Երեւան, 1997, էջ 538, 71բ համարի տակ:

19 Տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը:

20 Անանիան ուսումն աւարտելուց յետոյ Հայաստան է վերադարձել Փ. 666 թուին: Այս մասին տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ., էջ 80-81: Իսկ իր տոմարն էլ շարադրել է Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի պատուէրով, մինչեւ վերջինիս մահը՝ 667-668 թ.: Թէպէտ սա ընկնում է Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնեանի տիրապետութեան՝ համեմատաբար կայուն տարիներին, այդուհանդերձ այս տարիներին նախորդած արաբական արշաւանքները եւ արաբ-բիզանդական բախումները Հայաստանում պիտի բաւական խարխլած լինէին երկրի թէ՛ տնտեսութիւնը, եւ թէ՛ մշակոյթը:

21 Այստեղ, թէպէտ ձեռագրում եղել է *«յերկրորդ»*, սակայն տպագրում տրուած է. *«յերրորդ»*, որ Մալխասեանցն է ուղղել, հիմք ընդունելով, Ասողիկի այս հատուածը խորենացուց վերցուած լինելը: Իրօք, Խորենացու մօտ սոյն տեղում *«յերրորդ»* է, եւ Ասողիկի այս հատուածն էլ համարեա նոյնաբար համընկնում է Խորենացու համապատասխան հատուածի հետ: Տե՛ս Մ. Խորենացի, գիրք Բ, գլ. ՁԲ:

22 Տե՛ս **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** *Պատմութիւն Տիեզերական*, աշխատասիր. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 60: Ստ. Մալխասեանցն այս հատուածը ծանօթագրել է, բացատրելով, որ սոյն միջակայքի ժամանակագրութիւնը յոյժ խառն է, քանի որ Շապուհի երկրորդ տարին 242-243 թթ. է, իսկ Դիոկղետիանոսն էլ գահակալել է 284-ից, որով եւ նրա երրորդ տարին էլ լինում է 286-287թթ.: Որպէս նախընտրելի տարի նա նախապատուութիւնը տալիս է Դիոկղետիանոսով որոշուած տարիներին եւ ըստ այդմ էլ Տրդատի գահակալումը դնում 286-ին: Նկատենք, որ Խորենացու պատմութեան ժամանակագրական համակարգը ճշդելու կապակցութեամբ Ստ. Մալխասեանցը նոյն Տրդատի գահակալումը դնում է Փրկչ. 263-ին. տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոց Պատմութիւն, թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ ակադ. Ստ. Մալխասեանի, Հայպետհրատ, Երեւան, 1961 գրքի յաւելուածում, էջ 422-424:

23 Տե՛ս ծանօթ. 21:

24 Ասողիկ, էջ 61:

25 Ասողիկ, էջ 63: Այստեղ Մալխասեանը դրել է նաեւ ծանօթագրութիւն, քանի որ Տրդատի առաջին տարին 286 - 287 թիւն է, ապա ուրեմն, նրա 17-րդ տարին էլ, երբ Ս. Գրիգորը դարձել է հայրապետ, պիտի լինի 303 թուականը. տե՛ս անդ, էջ 338, ծանօթ. 62:

26 Ասողիկ, էջ 64:

27 Ասողիկ, էջ 83: Սա Ասողիկի հէնց այն տեղեկութիւնն է, որ Մ. Օրմանեանի համար հիմք է ծառայել Հայոց դարձը Փ. 301-ին դնելու:

28 Ասողիկ, էջ 137:

29 Շապուհի թագաւորութեան սկիզբը Փ. 241 թ. է: Ըստ Ասողիկի տուեալների էլ Հայոց դարձը լինում է Շապուհի թագաւորութեան սկզբից 15 տարի յետոյ, որ կը տայ Փ. 241թ.+15 տարի = Փ. 256 թ.:

30 Թէպէտ Դիոկղետիանոսը Քաղկեդոնում հռոմէական բանակի կողմից կայսր է հռչակուել 284 թ. Սեպտեմբերի 17-ին, եւ հէնց այդ օրուանից էլ սկսում է նրա գահակալութիւնը, սակայն վաղ միջնադարում լայն կիրառում ունեցած Դիոկղետիանոսի գահակալման թուահաշուի գլուխ է ընդունուած 284 թ. Օգոստոսի 29-ը: Ըստ այսմ, այստեղ եւս, Դիոկղետիանոսի տարիները կը հաշուենք Օգոստոսի 29-ից: Լրացման կարգով աւելացնեմ, որ ինձ յայտնի չէ գահակալման եւ թուահաշուի սկիզբների այս տարբերութեան պատճառը, սակայն կարելի է ենթադրել, որ այդ 19-օրեայ տարբերութիւնը առաջացել է հետեւեալ կերպ: Դիոկղետիանոսի գահակալումով սկսուող տարեհաշիւը կիրառուած է հիմնականում եգիպտական քրիստոնէական օրացոյցում: Նշուած թուականին Սեպտեմբերի 17-ը համապատասխանել է եգիպտական օրացոյցի Թոթ ամսի 20-ին: Եւ, քանի որ գահակալումը սկսուել է Թոթ ամսում, ապա թուահաշուի սկիզբ է ընդունուել այդ նոյն ամսի սկիզբը՝ այսինքն՝ Թոթի 1-ը, որն էլ համապատասխանել է Օգոստոսի 29-ին: Այսինքն, գահակալումը ձեւականօրէն հաշուուել է ոչ թէ իր բուն օրից, այլ այն եգիպտական ամսի սկզբից, որում դա եղել է:

31 Աւելի ստոյգ՝ Փ. 300 թ. Օգոստ. 29-ից 301 թ. Օգոստ. 29 միջակայքը:

© National Library of Armenia

32 Ճշգրիտ՝ Հայոց թուականի սկզբից 252 տարի առաջ կը լինի Փ. 300 թ. Յուլիսի 11-ը: Սակայն ակնյայտ է, որ Ասողիկը չէր կարող նկատի ունենալ հէնց ա՛յդ ամիս-ամսաթիւը: Ասողիկի տուած տեղեկութիւնը պէտք է հասկանալ ընդամէնը տարուայ ճշդութեամբ:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Ասողիկի օգտագործած բուն ժամանակագրական համակարգը մենք չենք ճշդել (դա, թէպէտ կարեւոր, սակայն շատ ծաւալուն եւ աշխատատար գործ է, որ ներկայումս դուրս է մեր ծրագրերից): Ուստի, Դիոկղետիանոսի ժամանակը ըստ Ասողիկի բուն ժամանակագրական համակարգի մենք չգիտենք: Եւ ըստ նրա տարիների որոշուած ժամանակներն էլ յոյժ պայմանական են: Միեւնոյն ժամանակ, սակայն, նկատի ունենալով, որ, ինչպէս վերը երեւաց, Հայոց դարձի համար թէ՛ Դիոկղետիանոսի տարիներով, եւ թէ՛ Հայոց թուականի սկզբով որոշուած ժամանակները համընկնում են, կարող ենք ընդունել, որ Ասողիկի ժամանակագրական համակարգում Դիոկղետիանոսի տարիները իրենց տեղում են, եւ շեղումներ եթէ կան էլ, ապա՝ շատ աննշան:

33 Տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ.:

34 Եւ սրանցից ոչ մէկն էլ չի համընկնում ներկայիս ընդունուած Փ. 301 թուականին: Այստեղ դեռ հաշուի չեն առնուած Շապուհի տարիները, որոնք կը տային բոլորովին տարբեր ժամանակ:

35 Տե՛ս **Յ. Քիւրտեան, Յովհաննէս վարդապետ Կոզեռն**, «Հանդէս Ամսօրեայ», 1967, թիւ 1-3, սիւն 1-16, յօդուածում, սիւն 9:

36 Տե՛ս նոյն տեղում:

37 Տե՛ս Անանիա Շիրակացի, էջ 263-264:

38 Այստեղ տարիների գումարից 1 տարի հանում ենք, քանի որ պատմական ժամանակագրութեան համակարգում զրո թուական չկայ, ուստի եւ հարկ է ն.Ք. տարիներից Փրկչ. տարիներին անցնելիս տարիների թուից հանել այդ մէկ տարին:

39 Տե՛ս **Գրիգոր Բրուտեան**, *Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը*, «Հանդէս Ամսօրեայ», 1998, սիւն 1-78, նաեւ՝ **Գրիգոր Բրուտեան**, *Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը*, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 1999 գրքում, էջ 108, նաեւ՝ էջ 37-43:

40 Այստեղ վրիպակ կայ: Տպագրում տրուած է «*ՄԾԲ (552)*», որ ակնյայտ սխալ է: Քանի որ Ս. Գրիգորից մինչեւ Հայոց թուականի սկիզբը (Փ. 552 թիւը) չի կարող 552 տարի լինել, ուստի վրիպակ է ոչ թէ ՄԾԲ-ը, այլ 552-ը, որ պիտի ուղղուի՝ 252:

41 Տե՛ս **Աշ. Գ. Աբրահամեան**, *Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը*, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1956, (այսուհետեւ՝ Յովհաննէս Սարկաւագ) էջ 132:

42 Նոյն տեղում:

43 Նոյն տեղում:

44 Նոյն տեղում՝ էջ 228:

45 Յովհաննէս Սարկաւագը իր ժամանակային տուեալները տուել է ժամանակագրական տարբեր համակարգերով, որոնցից մէկն էլ հէնց «*հինգհարիւրեակի (կամ՝ Ծ.եակի)*» կոչուած համակարգն է: Աշխարհի արարչութիւնից մինչեւ Անդրէասի 200-եակի սկիզբն եղած միջակայքի իրադարձութիւնների համար այս համակարգով (Սարկաւագի կողմից) տրուած տարիները տարբերւում են ժամանակագրական այլ համակարգերով տրուած տարիներից: Անդրէասի 200-եակի սկզբից (Փրկչ. 352 թուից) յետոյի իրադարձութիւնների համար այս համակարգը լրիւ ներդաշնակ է ժամանակագրական այլ համակարգերին (սրա մասին աւելի մանրամասն՝ տե՛ս Գր. Բրուտեան, Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 1999 գրքում):

46 Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 1999 գրքում, էջ 46-52:

47 Խօսքը վերաբերում է ոչ թէ Թադէոս առաքեալի իսկական ժամանակին, այլ նրան, թէ որն է եղել Թադէոս առաքեալի ժամանակը Յովհաննէս Սարկաւագի կիրառած ժամանակագրական բուն համակարգում:

48 Սա էլ Եւսեբիոս Կեսարացու ժամանակագրական համակարգն է, որ Սարկաւագը կոչում է երբեմն «*ըստ եօթանասնից*», երբեմն՝ «*ըստ Եւսեբիոսի*»: Մանրամասները տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ. մէջ:

49 Մանրամասն քննութիւնը տե՛ս Գր. Բրուտեան, նշ., աշխ. էջ 40 - 41:

50 Այս 5976-ը Հայոց թուականի սկզբնաւորման տարին է ըստ Սարկաւագ վարդապետի կիրառած հինգհարիւրեակի (Ծ.եակի) ժամանակագրական համակարգի. տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ., էջ 48, 69-70, 108-109:

51 Տե՛ս **Աշ. Աբրահամեան**, *Սամուէլ Անեցու Տոմարական եւ Տիեզերագիտական աշխատութիւնը*, «Էջմիածին», **Ա.** 1952, էջ 36: Ուշագրաւ է, որ Սամուէլ քահանայի այս տեղեկութիւնը նոյնաբար համընկնում է Յովհաննէս Կոզեռնի տոմարական մեկնութեան մէջ տրուածին (տե՛ս վերը): Այս համընկնումը խօսում է այն մասին, որ հայ տոմարագիտական մատենագրութեան մէջ եղած այլ մօտեցումներից զատ գոյութիւն է ունեցել նաեւ աւանդոյթ, ըստ որի՝ Քրիստոսի ծնունդից Հայոց դարձ եւ Հայոց դարձից Հայոց թուական ժամանակամիջոցները եղել են 276-ական տարի:

52 Ի դէպ, ըստ այս տուեալների ստացւում է, որ Քրիստոսի ծնունդից մինչ Հայոց թուականը

276+276= 552 տարի է, մինչդեռ իր Պատմութեան մէջ Սամուէլ քահանան Քրիստոսի ծնունդից Հայոց թուական միջակայքը դրել է 553 տարի: Այդ մասին աւելի մանրամասն՝ ստորեւ:

53 Սամուէլ Անեցին Քրիստոսի ծնունդը դրել է ն.Ք. 2, կամ 4 թուին (տե՛ս **Գր. Բրուտեան**, *Քրիստոսի ծննդեան թուականն ըստ Հայ մատենագրական աւանդոյթի*, «Էջմիածին», **Է.** 1998, էջ 73-88): Քանի որ տուեալ դէպքում ն.Ք.4 թիւը չի ներդաշնակում Հայոց թուականից 552 տարի առաջ լինելու մասին պնդմանը, ուրեմն, կը վերցնենք ն.Ք. 2 -ը: Տե՛ս նաեւ ծանօթ. 17:

54 Տե՛ս **Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքումն ի գրոց պատմագրաց*, յառաջաբան, համեմատութիւններ, յաւելուածներ եւ ծանօթութիւններ՝ Արշակ Տէր-Միքելեանի, Ս. Էջմիածնի տպարան, Վաղարշապատ, 1893, էջ 51: Այստեղ փակագծերի մէջ «արաբական» թուականները աւելացուած են իմ կողմից: Իսկ հրաշքները աւելացուած են իմ կողմից: Իսկ հրաշքները տարակողը այդ թուերի համար տողատակում տուել է ծանօթագրութիւններ. ՅԺԸ (318)-ին՝ «*այլք ՅԺԲ*», եւ ՄԽԲ(242)-ին՝ «*այլք ՄԽԱ*»:

55 Սամուէլ Անեցի, էջ 74-75: Այստեղ (էջ 75-ում) Քրիստոսի 554 թուականի դիմաց դրուած է Հայոց Ա(1) թուականը, եւ ընդհանրապէս, այստեղ Քրիստոսի ծննդեան եւ Հայոց թուականների տարբերութիւնը 553 է, որ նշանակում է, թէ Հայոց թուականի սկիզբը դրուած է Քրիստոսի ծննդեան 554 թուին:

56 Այդ մէկ տարուայ տարբերութիւնը առաջանում է նրանից, որ Քրիստոսի ծնունդը համարւում է հէնց 1 թուականին:

57 Այս տարբերութիւնը կարող է լինել հետեւանք շատ հաւանական վրիպակի՝ Բ → Ը (2 → 8), որ *Բ* եւ *Ը* գրերի նմանութեան-շփոթութեան արդիւնք է:

58 Ի դէպ, այստեղ 242-ի փոխարէն 241 լինելու օգտին է վկայում նաեւ այն, որ Սամուէլի Պատմութիւն է վկայում նաեւ այն, որ Սամուէլի Պատմութիւն է վկայում ըստ 4 տարբեր ձեռագրերի կայ. «*Ի ս. Գրիգորէ ՄԽԱ ամ է. յայս վայրս եղաւ թուականն Հայոց*»: Տե՛ս Սամուէլ Անեցի, էջ 74, տողատակում՝ ծանօթ. 3:

59 Այս 553 տարին 1 տարով աւելի է տոմարական մեկնութեան մէջ նոյն ժամանակի համար տրուած 552-ից: Ինչպէս ստորեւ կը տեսնենք, Սամուէլ քահանայի տոմարական մեկնութեան եւ Պատմութեան միջեւ կան այլ տարբերութիւններ եւս: Իսկ Պատմութեան այս հատուածի տուեալները տարբեր են նոյն Պատմութեան բուն շարադրանքի տուեալներից:

60 Նշենք նաեւ, որ առաջարկուած ուղղումներով Անեցու այս երկու տեղեկութիւնները դառնում են իրանահամաձայնեցուած (եւ՛ ըստ Քրիստոսի, եւ՛ ըստ Հայոց թուականի ստացւում է միեւնոյն տարին՝ Փ. 311թ.): Իսկ ըստ հիմնական ձեռագրում եղած տարբերակի դրանք Հայոց դարձի համար տալիս են տարբեր տարիներ (ըստ Քրիստոսի՝ 318տարի–ն.Ք.2թ.+1տարի=Փ.317 թ., իսկ ըստ Հայոց թուականի էլ՝ Փ.552–242տարի=Փ.310 թ.):

61 Այս մէկ տարուայ տարբերութիւնը առաջանում է նրանից, որ Քրիստոսի ծնունդը համարւում է հէնց 1 թուականին:

62 Տե՛ս Սամուէլ Անեցի, էջ 63:

63 Նոյն տեղում:

64 Տե՛ս ծանօթ. 56:

65 Սամուէլ Անեցի, էջ 69, տողատակում, ծանօթ. 2, փակագծերում «արաբական» թուանշանները ես եմ դրել:

66 Թէպէտ Պատմութեան համապատասխան հատուածում տրուած է 247 տարի, Փրկչական թուականը հաշուելիս հարկ է 552 թուից հանել 249 տարի, քանի որ 247-ը վերաբերում է Ս. Գրիգորի կաթողիկոսութեան սկզբին, իսկ ըստ Սամուէլ քահանայի Հայոց դարձը դրանից 2 տարի առաջ է, ուրեմն, հարկ է հանել 247+2=249 տարի, որով եւ այս տողում ստանում ենք Քրիստոսի ծնունդից 304 տարի անց, որ կ'ասի Փ. 303 թ. (Փ. 552 թ.–249 տարի= Փ. 303 թ.):

67 Այդպէս է ընդունուել նաեւ մեր ներկայ Փրկչական թուականը հիմնող՝ Դիոնիսոս Փոքրի կողմից. տե՛ս **И. А. Климишин**, *Календарь и Хронология*, "Наука", Москва, 1985, ст. 240-250. Տե՛ս նաեւ՝ Գր. Բրուտեան, նշ. աշխ.:

68 «Եօթանասնից» կոչուող ժամանակագրական համակարգ, որ յայտնի է նաեւ «ըստ ժամանակագրութեան», կամ «Եւսեբիոսի» անուններով: Լայնօրէն կիրառուած է Յովհ. Սարկաւագի եւ այլ հայ մատենագիրների երկերում:

69 Այս համակարգի թուերի մասին աւելի հանգամանօրէն տե՛ս Գրիգոր Բրուտեան, Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 1999 գրքում, աղիւսակներ 1ա,բ եւ 2ա,բ, էջ 42, 43, 69, 70:

70 Ի դէպ, այս նոյն թուերն են տրուած նաեւ Յակոբ Ղրիմեցու տոմարական մեկնութեան մէջ: Այս մասին աւելի հանգամանօրէն՝ տե՛ս ստորեւ:

71 Տե՛ս **Յակոբ Ղրիմեցի**, *Տոմարագիտական աշխատութիւններ*, աշխատասիրութեամբ Ջ.Ա. Էլնաթեանի, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1987, (այսուհետեւ՝ Յակոբ Ղրիմեցի) էջ 188-301:

72 Հրատարակուած բնագրի տարընթերցումների բաժնում (անդ, էջ 350) այս թիւը այլ տարբերակներ չունի, սակայն Յակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն Տումարի» երկը պարունակող ձեռագրերից մէկում, որ, ցաւօք, չի ընդգրկուել քննական բնագրի մէջ, սոյն տեղում տրուած է «ՃԻԵ» (125), որ աւելի է ներդաշնակում այս հատուածում տրուած Ս. Գրիգորից Հայոց գրերի գիւտ 116 եւ Ս. Գրիգորից Հայոց թուական 241 տարիի հետ. 241–116=125 (Տե՛ս

© National Library of Armenia

Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 2001, էջ 109ա):

73 Տե՛ս Ցակոբ Ղրիմեցի, էջ 214:

74 Տե՛ս անդ, էջ 177-187:

75 Անդ, էջ 180-181:

76 Անդ, էջ 182. «*Իսկ վասն երրորդ աւուրն այսպէս գիտեա: Արդ, աստի մինչեւ ի Ծնունդն Քրիստոսի ...եւ գայ տրեթի ԻԱ.(21) եւ յունուարի Զ.(6) եւ հոռի Ժ.(10): Թուականն Ծ.եկին ՐՆԻ.(5420) եւ Հռոմին՝ ՄՁ.(280), իսկ Հայուն՝ ԾԸ.(508): ...եւ օր Ծննդեան հինգշաբթի*»:

77 Անդ, էջ 183:

78 Տե՛ս Գր. Բրուտեան, Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը, էջ 94:

79 Անդ, էջ 92-103:

80 Աւելորդ չէ նշել նաեւ, որ այս հինգ իրադարձութիւնների համար Ղրիմեցին իր նոյն երկում տուել է նաեւ հինգհարիւրեակի (Ծ.եկին) համակարգով տարիները, որոնք բոլորն էլ նոյնաբար համընկնում են համապատասխան իրադարձութիւնների համար Սարկաւագի տուած թուերին ըստ Ծ.եկի. տե՛ս անդ, էջ 108 եւ Ցակոբ Ղրիմեցի, վերոնշեալ տեղիները:

81 Գր. Բրուտեան, նշ. աշխ., էջ 31-33, 108: Շաբաթուայ օրուայ համընկումը վկայում է, որ ստացուած տարեթիւը ստոյգ է:

82 556-ը Քրիստոսի ծննդից Հայոց թուական տարիների թիւն է ըստ հինգհարիւրեակի (Ծ.եակի) ժամանակագրական համակարգի: Տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ., էջ 69-70, աղիւսակ 2ա, 2բ (աղիւսակի ստորին ձախ կէսում):

83 Ցակոբ Ղրիմեցի, էջ 214:

84 Համեմատութեան համար տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ., էջ 42-43, աղիւսակ 1ա, 1բ (աղիւսակի վերին աջ կէսում):

85 Տե՛ս անդ, էջ 69-70, աղիւսակ 2ա եւ 2բ-ում:

86 Ցակոբ Ղրիմեցի, էջ 131. «*յԱդամայ հետէ ՐՋՀԶ.(5976) ամ էր եւ ի ծննդենէն Քրիստոսի ՇՄԳ.(553)*»:

87 Անդ, էջ 177-178:

88 Տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ., էջ 42-43, 108:

89 Անդ:

90 *Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ* **Դաւթի Քահանայի**, աշխատասիր., Արտաշէս Մաթեւոսեան, էջ 157ա-163ա, «Նաիրի», Երեւան, 1995:

91 **Վ. Ցակոբեան**, *Մանր Ժամանակագրութիւններ XIII-XVIIIդդ.*, հ. II, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1956, էջ 1-32:

92 **Արտաշէս Մաթեւոսեան**, տե՛ս *Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ Դաւթի Քահանայի*, նմանատպութիւն, ուսումնասիր., վերծան., ծանօթագր. եւ ցանկեր աշխատասիրութեամբ Արտաշէս Մաթեւոսեանի, էջ 19-21, «Նաիրի», Երեւան, 1997:

93 Արտաշէս Մաթեւոսեան, տե՛ս Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ Դաւթի Քահանայի, նմանատպութիւն, ուսումնասիր., վերծան., ծանօթագր. եւ ցանկեր աշխատասիրութեամբ Արտաշէս Մաթեւոսեանի, էջ 40, «Նաիրի», Երեւան, 1997:

94 Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ Դաւթի Քահանայի, աշխատասիր., Արտաշէս Մաթեւոսեան, «Նաիրի», Երեւան, 1995, էջ 162բ եւ Մանր Ժամանակագրութիւններ, հ. Բ, էջ 17:

95 Անդ:

96 Միշդ չէ Վ. Ցակոբեանը, որ Հռոմի 304-ը համարում է զուգակշիռ Փրկչական 551-ին. տե՛ս Մանր Ժամանակագրութիւններ XIII-XVIIIդդ., հ. II, էջ 29:

97 Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ Դաւթի Քահանայի, էջ 158բ,

98 Տե՛ս Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ Դաւթի Քահանայի, էջ 161ա, եւ Մանր Ժամանակագրութիւններ XIII-XVIIIդդ., հ. II, էջ 11:

99 Անդ:

100 Անդ, փակագծում «արաբական» թուանշանները ես եմ դրել. Գ.Բ.:

ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՅԹՆԵՐ
(Հաւուց թառ)

Գագիկ Սարգսեան

Հաւուց Թառի վանքը միջնադարեան Հայաստանի նշանաւոր կրօնամշակութային, ուսումնական, գրչութեան կենտրոններից է եղել: Վանքի հռչակը հիմնակառուցում պայմանաւորուել է հայ եկեղեցու սրբազան մասունքներից մէկի՝ Ամենապիտակիչ փայտակերտ Սուրբ Նշանի (Քրիստոսին խաչից իջեցնելու դրուագը) առկայութեամբ:

Վանքի պատմական անցուդարձը, գործունէութիւնն իր արտացոլումն է գտել մատենագրական սկզբնաղբիւրներում, մասնաւորապէս տեղում ընդօրինակուած բազմաթիւ ձեռագրերի յիշատակարաններում: Բացառիկ աղբիւրագիտական արժէք ունեն յուշարձանախմբի կառոյցների որմերին, խաչքարերի եւ տապանաքարերի վրայ փորագրուած վիմական արձանագրութիւնները:

Հաւուց Թառի վանքի երբեմնի վեհաշուք համակառոյցից այսօր պահպանուած յուշարձաններն ամփոփուած են չորս յուշարձանախմբերում: Պարիսպներով ներփակուած խմբի կենտրոնում Ասրով ներփակուած տուածատուր Համադանցի կաթողիկոսի (1715-1725) կառուցած եկեղեցին է (կիսաշէն): Եկեղեցու հարաւային կողմում 11-13-րդ դարերի գաւթի կիսակործան պատերն են: Գաւթին արեւելքից յարում է քառակուսի յօրինուածքով մի կառոյց, որը, թերեւս դամբարան կարող է լինել՝ շինուած ամենավաղը 14-րդ դարի 10-20-ական թթ.: Դամբարանի համար որպէս հիւսիսային պատ ծառայել է մէկ այլ կառոյցի հարաւային որմը: Վերջինիս յատակագծային յօրինուածքը դժուար է որոշել, քանի որ միւս պատերը հիմնովին աւերուած են: Կարելի է ենթադրել, որ այստեղ եղել է մատենագրութեան մէջ յիշատակուած եկեղեցիներից մէկը, կառուցուած, թերեւս, 13-րդ դարի առաջին կէսին: Հարաւային պարսպապատի մէջ ներառնուած է ընդարձակ սեղանատունը, իսկ հիւսիսայինի ամբողջ երկայնքով վանական խցերն են:

Միւս խումբը վանական համակառոյցի արեւմտեան կողմում է՝ պարսպապատ հատուածից մօտ 100 մ հեռու, ոչ բարձր բլրի վրայ: Գլխաւոր կառոյցը 13-րդ դարի սկզբներով թուագրուող գմբեթաւոր, չորս անկիւնային աւանդատներով եկեղեցին է: Շինութեան հարաւային կողմում պահպանուել է փոքր մատուռի հիւսիսային պատը: Սա, թերեւս, սկզբնաղբիւրներից յայտնի Ս. Կարապետ երկու մատուռներից մէկն է, կառուցուած նոյնպէս 13-րդ դարում: Եկեղեցու եւ Ս. Կարապետ մատուռի միջնամասում, օգտագործելով վերջիններիս պատերը, կառուցուել է եւս մէկ մատուռ: Մատռանման մի կառոյցի հետքեր նշմարւում են եկեղեցուց մօտ 30 մ հարաւ-արեւմուտք՝ բլրալանջին:

Երրորդ խումբը գտնւում է պարսպափակ յուշարձաններից մօտ 200 մ արեւելք: Այստեղ գլխաւոր շինութիւնը 1213 թ. կառուցուած Սպարապետ մատուռ-դամբարանն է:

Յուշարձանների առանձին խումբ են խաչքարերն ու տապանաքարերը, որոնք միաւորուած են չորս վայրերում ու գերեզմանոցներում՝ վանքից շուրջ 500 մ

© National Library of Armenia